


188

16

ՀԱՄԱԼԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ԿՈՆֆԵՐԵՆՑԻԱՆ

ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԶՄԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ
ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՄԵՐՉԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ



ԹԵՏԾՐԱՏ 1727 ՅԵՐԵՎԱՆ

n 1 MAR 2010

350.7

32-25.

Պրոլետարէնք բոլոր յեւենէրի, միացե՛ք.

ԱՐ

16-րդ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ

ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԶՄԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ
ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՄԵՐՉԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Յու. Ա. Յակովլեվի զեկուցումը յեվ յեղրափակ-
ման խոսքը

13932-57 344

(Ա-4844
49)

09 JUL 2013

ԶԵԿՈՒՑՈՒՄ

Ընկերներ, Խորհրդային ինքը բանվոր զաստկաբու և Կոմունիստական կուսակցությունն իրենց առաջ են գրել արդյունաբերության հիմնական վերակառուցման, ինդուստրիալի արագ զարգացման և զյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործին ձեռնարկելու մեծագույն խնդիրը։ Մենք վոչ միայն դրել ենք այդ խնդիրները, մենք արդին լուրջ կոփվեր ենք մղում նրանց իրականացման համար։ Մենք այժմ արգեն այդ խնդիրները լուծում ենք մեր պրակտիկ աշխատանքի ընթացքում։ Հնգամյա պլանի թվերի սյունակները խսում են այն խնդիրների մասին, վորոնց լուծման համար մենք այժմ արգեն կոփվ ենք մղում։ Տնտեսուրյան վերակառուցման համար անհրաժեշտ ե մեր պետական ապարատի վերակառուցումը։ Արդյունաբերության և զյուղատնտեսության վերակառուցման ասպարիզում ունեցած մեր փորձը ցուց ե տալիս, թե ինչ հսկայական մինուսներ, ինչ հավելյալ դժվարություններ ե ծնում մեր պետական ապարատի վատ վորակը—նրա չափազանց մեծ ծավալը, ձգձգումները և բարուկրատիզմը։ Ապարատի մի վորակը պահանջվում ե նրա համար, վորապես աշխուժացնենք իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմի տարիներում վակված ու կի-

Հ. № 994։ Գրասեպիար № 2165 (ր), Տիրամ 2000։
Գետհատի տուածին առարան Վաղարշապատում։
Տառվել № 108։

սաքանդ գործարանը, մլուսը պահանջվում ե նրա համար, վորպեսզի նոր գործարան կառուցենք համաշխարհային տեխնիկալի ժամանակակից նվաճումների հիման վրա: Ապարատի մի վորակն անհրաժեշտ ե, վորպեսզի ամրացնենք մեր և գյուղացիության մերձեցումը՝ նրա հետ առևտուր անելով, մլուսն անհրաժեշտ ե, վորպեսզի այդ մերձեցումն ամրապնդենք վոչ միայն առեարի, այլև կոլլեկտիվների, խորհրդադին տնտեսությունների և կոնտրակտացիալի հիման վրա: Ի՞նչ պետք ե անի կուսակցությունը կառավարման ապարատն արդյունաբերության ու գյուղատնտեսության վերակառուցման խոդիրներին համապատասխանցնելու համար, ի՞նչ ուղղությամբ պետք ե ընթանա նրա այդ աշխատանքը, —ահա այս հարցը բյուրոկրատիզմի վերաբերյալ թեզիսների գլխավոր թեման ե:

ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒԹՅՈՒՆԸ — ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԽՆ Ե

Հնկերներ, իս կարծում եմ, դուք ուշադրություն եք դարձրել այն բանի վրա, վոր այս թեզիսներում առաջին տեղը գրավում ե և առանձնապես ընդգծված ե կատարման ստուգության հարցը: Միքանի ընկերներ, թե թեզիսները մշակելիս ե թե հրապարակվելուց հետո, տարակուսում ելին՝ ձիշու ե, արդյոք, վոր հենց կատարման ստուգության հարցին ե այս թեզիսներում առաջին տեղը տրված: Այս հարցի պատասխանը պետք է անմիջապես տալ, վորպեսզի վոչ մի թյուրիմացություն չլինի: Յեվ, իրոք, ինչու ալժմ ես, իերը Հռիմենքի հարաբերան հեղափոխությունից անցել ե համարյա 12

տարի, ինչու այժմ ևս կինտրոնական կոմիտեն բյուրոկրատիզմի վերաբերյալ թեզիսներում առաջին պլանի վրա լի զնում կատարման ստուգությունը:

Վոչ մի բուրժուական յերկրում այսպիսի հարց չի դրված: Ինչու: Վորովհետեւ, վորեւ հին բուրժուական յերկրում վոչ մի «մկրատ» չկա այդ յերկրի քաղաքական ու տնտեսական կարգի և նրա վորոշումներն ու պատվերներն իրագործող ապարատի միջև: Բուրժուական ֆրանսիայի պետական ապարատը, վոր կազմակերպվել ե 100—120 տարվա ընթացքում, վոչ մի հակասության մեջ չե այդ յերկրի քաղաքական կարգի հետ: Բուրժուատվիան լիակատար յերաշխիք ունի, վոր նրա կառավարության, նրա պարլամենտի ամեն մի վորոշում ամբողջ ապարատը վերիցվար ճշտությամբ ու ժամանակին կկատարի: Ունենք մենք այդպիսի յերաշխիք: Մենք կալվածատիրական բուրժուական Ռուսաստանի հին ապարատը վշտեցինք, վորպես բանվոր դասակարգի ու գյուղացիության պետական ձնշման մի մեքենա: Սակայն մենք ստիպված ենք մեր նոր ապարատն զգալի չափով կազմելու այն մարդկանցից, վորոնք մեզ ժառանգություն մնացին հին հասարակակարգից: այդ ապարատի մի շարք մասերը մենք պատրաստի ձեռվ տեղափոխեցինք մեր ապարատը: Հենց այդ պատճառով մենք, վորպես խորհրդադին յերկրը, յերաշխիք չունենք՝ թե մեր կառավարական մարմինների վորոշումներն իրոք կկատարվեն մեր ապարատի կողմից (վորը բավականաշատ խորթ ե մեղ՝ անձնական կազմի տեսակետից և այլն):

Պատահիկան մեղ իրավունք ե տալիս այդ մասին

կասկածնուու: Մեր որենքների և կուսակցական դիրեկտիվների խեղաթյուրումների և ուղղակի խախտումների թիվը չափազանց մեծ է: Անա մեկն այն պատճառներից, թե ինչու կատարման ստուգությունը մեզանում առաջին պլանի վրա յէ գրված, ահա այն պատճառներից մեկը, թե ինչու Վլագիմիր Իլյիչը միշտ կատարման ստուգության խնդիրն առաջադրում եր, վորպես վոչ միայն ԲԳՏ, այլ նաև վորպես մեր ամբողջ բաղաբականության խնդիր:

Կատարման ստուգության խնդիրը հատկապես այժմ սուր կերպով զնելու մյուս պատճառը ներկա մոմենտի այն առանձնահատկություններն են, փորոնց քննությամբ զբաղվեցին թե կուսակցության կենտրոն մի ապրիլյան պլենումը և թե ամրող կոնֆերենսցիան։ Մենք այժմ ապրում ենք այնպիսի պայմաններում, իբր կուլակը հարձակվում է, իսկ մենք նրան հետ ենք մղում։ Մենք ապրում ենք այնպիսի պայմաններում, իբր մեր սոցիալիստական հարձակումը կատաղի դիմավրության և հանդիպում կուլակի կողմից, վորը վախենում է իր գիրքերը կորցնելու կուլակը, իսկ մի շաբաթ գեղաքերում նաև նեպմանը և մեր չինովիկական ապարատում նստած բուրժուական ինտելիգենտներն աշխատում են ծավալիող զասակարգավիճ պայքարում մեր պետական մեքենացի վորոշ մասերն իրենց կողմը դարձնե՞ց իրենց ծառայեցնել։ Ուսի՛ կատարման ստուգության հարցը դառնում է կենտրոնական հարց, վորին պետք է առանձնապես մեծ ուշադրություն նվիրել, նույնիսկ ափելի, բայց այդ անհրաժեշտ եր սրաց միտանի տարի առաջ,

Մենք իրավունք ունենք այսպիսի հարց դնելու.

լեռը 1921—22 թ. Վաղիմիր Խլիչն տռանձին ուժով
ընդգծեց կատարման ստուգության այդ հարցը, դրա-
նից հետո այդ հարցն ավելի քիչ կարևորություն է
ստացել, թի ավելի շատ Դուք, անշուշտ, կհամաձայն-
վեք, զոր այդ հարցն այժմ ավելի կարեոր է զարձել
զորովհետև այժմ հասել ե այն կոիվարի ժամանակը,
վոր նախատեսել ե Լենինը: Լենինը կուսակցության
XI համագումարում ուղղակի ասել ե. մեզ սպասում ե
«Գնական կոիվ ուսական կապիտալիզմի դեմ, վորը
ծնվում ու աճում ե մանր գյուղացիական տնտեսու-
թյանից և վորը պաշտպանվում ե նրա կողմից. ահա
այստեղ մոտիկ ապագայում մեզ կոիվ ե սպասում,
վորի ժամանակը ճշտորեն վորոշել չե կարելի»: Դուք
լավ մտածեցեք Լենինի այդ մատնանշումի մասին,
հատկապես համեմատեցեք այն մարդկանց լեռություն-
բի հետ, վորոնք մեկնարանելով Լենինին՝ բանն այս-
տեղ հասցըին, թե իլլիչը վերջին տարիներում վոչ մի
ցուցում չե տվել կուլտակի նկատմամբ: Լենինն ուղ-
ղակի ասել ե, վոր մենք ապագայում կուպելու լենք
ուսական կապիտալիզմի դեմ, վորը ծնվում ու աճում
ե գյուղացիական մանր տնտեսությունից: Յեվ լեթե
այն ժամանակ կուսակցության XI համագումարում
չեր կարելի ժամանակը վորոշել, ապա այժմ մեզ համար
պարզ ե, վոր այդ ժամանակիները հասել են, վոր այդ
կոիվը մենք արդեն մղում ենք: Իսկ լեթե մենք իրոք
այդ կոիվը մղում ենք, ապա այդ նշանակում ե, վոր
կատարման ստուգության հարցը, այն հարցը, թե
ինչպես ե Վիբարկվում մեր զասակարգային գիծը, թե
մեր ապարատն ինչպես ե հակահարված տալիս կու-
րակին, թե ինչպես ե մեր պետական ապարատն աշ-

խոտում գյուղի սոցիալ/ստական վերակառուցման
համար, — այդ հարցերը դառնում են վոչ թե ԲԳԾ հար-
ցեր, վոչ թե այս կամ այն ապարատի հարցեր, այլ,
ինչպես Լենինն և ասել, դառնում են քաղաքակա-
նության կարերագույն հարցեր:

Պետք է, արզուք, որինակներ բերել, թե ինչպիս
գործնականում կատարման այդ ստուգությունը մի
շարք բացեր և յերեան հանում հատկապես այս աս-
պարիզում։ Անցյալ տարվա պարենալին մթերումները
ցուց ավին, վոր մեր ապարատի մի շարք մասերը
վերադասեցին կուլակի հետ բարեկամաբար վարվել,
կուլակի հետ խաղաղություն պահպանել, քան կատա-
րել կուսակցական դիրեկտիվներն ու խորհրդակին ո-
րենքները։ Այսպիսի մի կազմակերպության փորձը,
ինչպիսին Սմոլենսկի կազմակերպությունն է, ցուց
տվեց, վոր մեզանում գոյություն ունեն ամրող կաղ-
մակերպությունների վերաշերտեր, վորոնք շնորհիվ
դասակարգայնորեն-թշնամի տարրերի հետ մերձենա-
լու, շնորհիվ բանվոր դասակարգից կտրվելու դառնում
են մեզ ոտար ուժերի ձախափողը։ Վերջապես, այդ
մասին և խոսում նաև գյուղատնտեսական հարկի անց-
յալ տարվա կոմպանիան փորձը, իբրև անհատական
կարգով հարկման պետք եր լինթարկել տնտեսու-
թյունների մոտավորապես 3^{0/0}ը, այնինչ հարկման
լինթարկից միայն 1 և կես 0^{0/0}ը, և այն ել անհա-
տական հարկման լինթարկիցին շատ զեպքերում վոչ
թե կուլակները, այլ միջակները, և մենք հարկադր-
ված լիդանք վերելից շակելու սխալները։

Այդ փորձը ցույց է տալիս, վար աճխատանքի վոր
բնագավառն ել մենք փերցնենք, կատարման սուրբոյան

հարցն առաջադրվում է, վորպես բազակալանուրյան
կենտրոնական հարց, վարպես բյուրոկրատիզմի դեմ պայ-
քարելու մեր ամբողջ պլանի կենտրոնական հարց։

Կուսակցության կենտրոնական կոմիտեի թե-
ղիսները կատարման ստուգությունը քննության են
առնում վոչ միայն այն տեսակետից, թե ինչպես են
կատարվում մեր որենքներն ու դիրեկտիվները։ Կա-
տարման ստուգությունն ունի նաև իր այլ կողմը՝
տեղական փորձի հիման վրա ստուգել, թե վարքան լավ
են կենտրոնական դիրեկտիվներն ու ցուցումները։ Յեզ
այս ասպարիզում կարելի յէ որինակ բերել այս տար-
վա գյուղատնտեսական հարկի որենքը, վորի նպա-
տակն եր թեթևացնել միջակի դրությունը։ Որենքն իր
այդ նպատակին հասավ, սակայն միաժամանակ այս-
տեղ, կենտրոնում մեր ուշագրությունից վրիպեց այն
հանգամանքը, վոր միջակների վորոշ մասի համար,
3—4^{0/0}-ի համար, վորոնց հարկն անցյալ տարի թե-
թևացակ կարգավորման հատուկ փոնդի հաշվին, —
կարող եր այս տարվա հարկն ավելի ծանր լինել, քան
անցյալ տարի։ Մենք այդ բանը ժամանակին չնկա-
տեցինք։ Իսկ, արզուք, շատ որինակներ կարելի յէ
բերել այն մասին, վոր տեղերը՝ արգեն հրատարակ-
ված որենքը գործնականում կիրարկելուց հետո՝ մեզ
ասելին, ահա, տեսեք, մենք փորձեցինք գործնակա-
նում կիրարկել, վորպեսզի պարզենք, թե ինչ և գուրս
գալիս, և տեսանք, վոր այստեղ վորոշ սխալներ կա-
տարված են։ Շատ այսպիսի գեպքեր կարելի յէ մատ-
նանշել։ Միայն և միայն մեկ գեպք։ Մինչդեռ այս մի
ընդհանուր հարց է, վորը վերաբերում է մեծ թվով
տեղերի, յիթե վոչ այն բոլոր տեղերին, վորտեղ անց-

ւալ տարի գործադրվել և կարգավորման հատուկ փոնդը:

Այս թե ինչու կատարման ստուգության նպատակը միայն այն չէ, թե վորքան ճիշտ ժամանակին և անշեղորեն են կատարվում կուսակցական դերեկտիվներն ու խորհրդագին որենքները, այլ նայել ալն, վորպեսզի տեղական փորձի նիման վրա ստուգին կենտրոնում հրատարակվող դիրեկտիվներն ու ուենեները, վորպեսզի այս կամ այն պատճառով կենտրոնում չնկատվածը կարելի լինի ուղղել տեղերի փորձի հիման վրա: Միայն կենտրոնի կարգադրությունները տեղերի փորձի ու գործնական աշխատանքների միջոցով, իսկ տեղերի փորձը կենտրոնի ղեկավարությամբ ստուգելու միջոցով, միայն այս փոխադրձ վերանկողությամբ հարավոր կլինի վոչ միայն իրավործել կենտրոնական հիմնարկների առաջարկությունների ու փորոշումների անշեղ կատարումը, այլ նաև նրանց մեջ անհրաժեշտ ուղղումներ մացնել տեղական փորձի ցուցումների համաձայն: Յեվ այս կապակցությամբ ել ալելի պարզ և դառնում, թե ինչու այս հարցն առաջարկված, ընդունված ե, վորպես թեղինների կենտրոնական հարց:

ՄԻԱՆՁՆՅԱՍ. ՊԱՏՍՈՒԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՄԻԱՆՁՆՅԱՍ. ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կատարման ստուգության հետ սերտորեն կապված են իրեկու փորոշ չափով քաղաքական հարցեր.— 1) միանձնյա պատասխանատվության և միանձնյա կարգադրության հարցը և 2) կոմունիստների աշխա-

տանքի վորակի հարցը: Հասկանալի է, որ չի կարող կատարման ստուգության մասին փարեին խոս լինել, յեթե նայենի չե, թե ով ինչի նաև ա պատասխանատու, յեթե կա պետական ապարատի բոլոր աշխատակիցների անպատասխանատվություն, յեթե կա այսպես առաջ՝ փոխադրձ ապահովագրության համապարտ լիրաշխատվորություն:

Չնայած այն հանգամանքին, վոր վերջին տարում ապարատը վորոշ չափով կրճատված և պարզեցված է, դարձյալ այս ասպարիզում մեր հաջողությունները չափազանց անենան են: Մեր աշխատանքի սիստեմում չի կարելի կատարման ստուգությունն իրագործել, քանի վոր հայտնի չե, թե ով ինչի համար ե պատասխանատու, ով ինչ և անում: Մեր աշխատանքի ամբողջ սիստեմի չափազանց բնորոշ այս գիծը, անշուշտ, մնում է վորպես մեր ապարատի գլխավոր գիծը, այսպես, ինչպես միքանի տարի առաջ: Զեղանից լուրաքանչյուրը կարող է իր սեփական փորձից այս ձևի աշխատանքի բազմաթիվ որինակներ բերել սակայն լսու մի իրկու որինակ այսուածենալինիվ կրերեմ, փորպեսզի ցուց տամ մեր աշխատանքի սիստեմը, փորպեսզի ցուց տամ, վոր այստեղ հարցը վերաբերում է վոչ միայն և վոչ այնքան իվան իվանիչի կամ իվան Պետրովիչի աշխատանքն ուղղելուն, վորքան մեր ամբողջ ապարատի աշխատանքի սիստեմի ամենավասակար կողմը վոչնչացնելուն:

Յես, ինարկե, այստեղ կարող եմ իմ ուղած ամեն մի որգանի աշխատանքից որինակներ բերել, յեթե վորկե մեկն իրեն վիրավորված կզգանքա համար, վոր ինքն այս կոնֆերենցիալում չհիշվեց, ապա այդ

սիսալը կարող է ուղղվել այդ բացը կարող է լրացվել
իմ լեզրափակման խոռոքի մեջ այնպիս վոր՝ խնդրում
եմ թող նախապես չվիրավորվեն նրանք, վորոնք
չիշվեցին, իսկ նրանք ել չպարծենան, վորոնք հիշ-
վեցին: Այս կամ այն անձը չի հիշված վոչ թե այն
պատճառով, վոր նա բոլորից վատ ե, այլ ուղղակի
պատահաբար: (Ծիծաղ):

Մի որինակ լիս կվերցնեմ մեր որենսդրությու-
նից, վոր անմիջապես կապված է ԺՏԿ-ի հետ, մյուս
որինակը լիս կվերցնեմ մեր այն որենսդրությունից,
վոր անմիջապես կապված է գաշնակից հանրապետու-
թյունների հետ: Հարցը վերաբերում է մի շատ հասա-
րակ բանի—հիմնական շնորհարությունը բարեկալվե-
լու միջոցների վերաբերյալ որենքին, վոր հրապարակ-
ված է 1938 թ.: ԽՍՀՄ ժողովածորհը հանձնարարում
է ԺՏԿ-ի Առևտրի ժողկոմատին շաբաթվայնթաց-
քում մշակել առևտրական ներկայացուցիչներին առ-
ընթեր տեխնիկական բարոնների վերաբերյալ հարցը,
այդ բարոնները պետք է կազմակերպվեին ԺՏԿ-ի և
Առևտրի ժողկոմատի կողմից, վորպեսզի աշակցեին
մեր մարմիններին արտասահմանի տեխնիկական փոր-
ձին ծանոթանալու գործում: Ինքնըստինքան հարցն
ելական հարց չե, սակայն այստեղ չափազանց ելական
և աշխատանքի սիստեմը, վորը բնորոշ է վոչ միայն
ԺՏԿ-ի համար: ԺՏԿ-ի կառավարության հանձնարարու-
թյան կատարումն իր կողմից հանձնարարում է իր
Արտասահմանական բաժնին: այս բաժնը հիշալ աշ-
խատանքը հանձնարարում է մի ընկերոջ, վոր և կա-
տարում է 4 որում: Այսուամենայնիվ սկսվում է հա-
մաձայնեցումը ԺՏԿ-ի ներսում, ամենից առաջ արտա-

սահմանական բաժնի, զիստական-տեխնիկական բաժնի,
«վարչպետերի» և արտածման ընկերությունների միջև:
Ինչպես գուք զիտեք, ԺՏԿ-ի ապարատում մարդ-
կանց պակասությունն չի զգացվում, և 4 որում մշակ-
վող նախագիծը ԺՏԿ-ի ներսում համաձայնեցվում է
այս ակնվա ընթացքում: Յերբ արդեն նախագիծը հաս-
տափած և լինում ԺՏԿ-ի նախագահի տեղակալի կող-
մից, ԺՏԿ-ի ճետերից մեկը, նրա բաժիններից մեկը
անհրաժեշտ է համարում այդ տեխնիկական բյուրո-
ների վրա պարտականություն դնել մեր մամուլին
ինֆորմացիոն նյութեր հաղորդելու արտասահմանայն
նվաճումների մասին: Այսուհետեւ սկսվում է համաձայ-
նեցումը Ֆինժողկոմատի և Առևտրի ժողկոմատի հետ:
Ընդհանուր առմամբ այս համաձայնեցումը պահանջում
է ևս լիբեր ամիս, վորովհետեւ Ֆինժողկոմատը պա-
հանջում է, վորպեսզի լուրաքանչյուր տեխնիկական
բյուրոյի նախահաշիվ համաձայնեցվի նրա հետ: այս
հանհամանքը ևս ժամանակ է խլում: Առևտրի ժողկո-
մատում ևս գործերի նույն կարգն ե տիրում: Ընդհա-
նուր առմամբ այդ նախագիծը, վոր մշակվել եր մի
քանի որվա ընթացքում, համաձայնեցվում է գերա-
տեսչությունների միջև մոտավորապես կես տարվա
ընթացքում, իսկ այդ վերատեսչությունները, ինչպես
զիտեք, իրարից հեռու չեն գտնվում: Ի՞նչ հետևանք-
ներ են ստացվել այդ կիսամյա «համաձայնեցումից»:
հետևանքները վավերացված են արձանագրությամբ,
վոր կազմել է ԲԳՏ տեսուչը:

Ահա այդ արձանագրությունը.

«Փետրվարի 9-ին լիս, ԲԳՏ ժողկոմատի ավագ
հրահանգիչ Հովսեփիան, ընկ. Շմուկինի հետ համեմա-

տեղով Տեխրէուրոնների կանոնադրության սկզբնական նախագիծը (վոր անմիջական կատարողների կողմից մշակված և 1928 թ. հունիսի 10.ին) նույն կանոնադրության վերջնական նախագծի հետ, վորը հաստավագած և ժօֆիլ և Առևտրի ժողկոմատի կողմից 1928 թ. գեկտ. 5 ին, գտանք, վոր այդ ժամանակամիջոցում նախագիծը համաձայնեցված և ժօֆիլ վարչությունների, Արտածման ընկերությունների և Առևտրի ժողկոմատի վարչությունների և Ֆինժողկոմատի վայուտալին ու բյուջետային վարչությունների հետ. բացի դրանից Արտասահմանյան բաժնում տեղի է ունեցել յերեք խորհրդակցություն այս հարցի մասին, սակայն համաձայնեցումներն ու խորհրդակցությունները վորեն ելական փոփոխություններ չեն մտցրել կանոնադրության սկզբնական նախագծի մեջ, վոր մշակված և Արտասահմանյան բաժնի կողմից, Բ. Շմոռկին, Ա. Հովսեփիան»: (Միծադ): Ինչու իս այս որինակը բերի: Բանն ինչումն ե. այսեղ դարձյալ ելական հարցն այն ե, վոր պետք ե նետուեն զատել պարտականություններն ու պատասխանավորյունը, առանց վարի հնարավոր չելատրման սուզուրյունը:

Երկնում եմ, անհրաժեշտ ե, վոր մենք կատարման սոսուզության հարցը դնենք գործնական հողի վրա, պետք ե այս թեմայի (պայքար ընդդեմ բյուրոկրատիզմի) ընդդրկած հարցերի ամբողջ զումարից զատել այն հարցերը, այն ուղիներն ու ողակները, վորոնք մեզ իրոք հնարավորություն կտան այս հարցը տեղից շարժելու:

Ահա դարձյալ մի որինակ, վորը ցուց կտա, վոր կատարման սոսուզության և դրա հետ կապված՝ պար-

տականությունների ու պատասխանատվության հար- ցը կենարոնական հարց ե: Այս որինակից յերկում ե, թի դաշնակից հանրապետությունները (իս գարձյալ զիտակցաբար վերցրել եմ շատ փոքր նշանակություն ունեցող մի հարց) ինչպես են կատարել Միութենա- տանեցող ժամանակամիջոցում վոր վերա- կան ժողկոմիորհի հանձնարարությունը, վոր վերա- բերում ե շինարարական աշխատանքների համար տասնապետների վայրոց կազմակերպելուն: Հանձնա- րարությունը փոքր ե, և կատարման համար ել փոքր ժամանակամիջոց և արված,—2 ամիս: Հանձնարարու- թյունը արվել է 1928 թ. հունիսին: Ինչպես են կա- տարել դաշնակից հանրապետությունների ժողկոմ- իորհները Միութենական ժողկոմիորհի այս հանձնա- րարությունը: Ամենից առաջ՝ ապահատի մեխանիկալի- մասին: ՈՍՖԽՀ Տնտեսորհը, ստանալով հանձնարա- րությունը, մի շաբաթ պահում ե իր մոտ և ապա ու- ղարկում ե Լուսժողկոմատին: Լուսժողկոմատը միքանի պահելուց հետո ուղարկում ե Արհլուսգլխվարչու- թյան:

Արհլուսգլխվարը, մի փոքր իր մոտ պահելով, ուղարկում ե բանվորական կրթության բաժինը, այս բաժինն իր կողմից հանձնարարությունն ուղարկում ե անմիջական կատարողին, վորը և հանձնարարու- թյունը կատարում ե մի քանի որում: Դարձյալ ուշա- զորություն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, վոր անմիջական աշխատանքը, վորի մասին իս խո- սում եմ, կատարվում ե մի հանի որվա բնացիւմ: Ի՞նչ տեղի ունենում այնուհետև: Արհլուսգլխվարը վորո- ւի տեղի ունենում այնուհետև: Արհլուսգլխվարը վորո- ւի հարցը, համաձայնեցնել կառուցողների Միու- թյան կենակոմի հետ, և նախագիծն ստանալուց 12

որ հետո ուղարկում և կառուցողների կենտկոմին, իսկ մի ամսից հետո ուղարկում և նրանց նաև նյութերը: Կառուցողների կենտկոմն ընտրում և 2 հանձնաժողով. մեթոդական հանձնաժողովովն աշխատում և մի ամբողջ ամիս, իսկ մինչև այդ՝ մի ամիս շարունակ չի կարողանում նիստ գումարել: Այսուհետեւ 23 որից հետո հարցը հանձնվում է Փոքր Ժողկոմինորհին, վորը հանձնաժողով և ընտրում. այս հանձնաժողովը հրավիրում է Արհուսպիլարչության ներկայացուցչին, վորը չի գալիս, և այդ պատճառով նախագիծը հետաձգվում և 3 շաբաթ մնում և ընկած: Յերեք շաբաթից հետո Փոքր Ժողկոմինորհը քննության և առնում հարցը, և այստեղ պարզվում է, վոր հարցի ֆինանսական կողմը լիովին մշակված չե, նախագիծը վերադարձվում և լրացնելու համար. հանձնաժողովը դարձյալ աշխատում է, նախագիծն ուղարկվում և Ժողկոմինորհ և մարտի 5-ին հաստատվում է Փոքր Ժողկոմինորհի կողմից:

Զեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, վոր նախագիծը փաստորեն մշակվում և մի քանի որում, իսկ հետո 7 ամիս շարունակ քաշըըշվում ու ծամծմվում և մեր մեքենայի բոլոր առանձների տակ, քաշըշվում և միանգամայն անտեղի ու անիմաստ կերպով, այնպես, ինչպես տեխնիկական բյուրոների վերաբերյալ նախագիծը քաշըշվում ու ծամծմվում և ԺՏի մեքենայի առանձների տակ: Ի՞նչն ենք տեսնում մենք այստեղ: Դարձյալ այն, ինչ առաջին տեղն և բոնում բյուրոկրատիզմի գեմ պայքարելու վերաբերյալ կենտրոնական կոմիտեի թեղիսներում, այսինքն՝ ոլեաք և ստուգել կատարումը և լուծել դրա հետ կապված մյուս հարցը՝ զատել լաշխել պարտա-

կանություններն ու պատասխանատվությունը և սահմանել փաստական պատասխանատվություն:

Այժմ խոսենք Ուկրայնական մասին, վորպեսզի ՈՒՍԽՀ չնեղանա. (ծիծաղ): Տասնապետաների դպրոցի վերաբերյալ նույն հարցն այսպիսի ընթացք և ունեցել Ուկրայնայում: ՈՒԽՍՀ Ժողկոմինորհը յերեք շաբաթ ժամանակ և տալիս կուսադողկոմատին՝ զեկուցում ներկայացնելու համար. ապա նախագիծն ուղարկվում է Ֆինանսովածատին, վերջինը մի շաբաթից հետո խնդրում և Ժողկոմինորհից մի տարով հետաձգել կուսադողկոմատի նախագծի իրագործումը: 2 շաբաթ անցած ժողկոմինորհը նախագահի տեղակալն առաջարկում է Ֆինանսովածատին՝ այնուամենանիվ քննության առնել այդ հարցը: Սակայն ապարատն իր ուզան և առնում, միայն այլ ձեռվ՝ — առաջարկում և այդ հարցը քննության առնել ամբողջ կուսադողկոմատի 1928/29 թ. աշխատանքների պլանի հետ միասին: Վերջապես, Ժողկոմինորհը վորոշում և հարցը մի տարով հետաձգելիսկ կուսադողկոմատին առաջարկում և այդ ժամանակամիջոցում մանրամասն մշակել ամբողջ պլանը: Ուկրայնական կառավարության վորոշումից մեկ ամիս հետո Ուկրայնական Մշակական ներկայացուցչությունն այդ մասին տեղեկացնում և Միութենական Ժողկոմինորհի Գործերի կառավարչությանը:

Դարձյալ՝ վորպեսզի պարզ լինի, վոր այստեղ իրականն այն չե, վոր մենք վորեն մնկին բռնինք, այս կամ այն մարդու անունը տանք, իս ստիպված եմ մանրամասն պատմելու, թե ինչպես և կատարվել այդ հանձնարարությունը Բելոսուսիայում: Բելոսուսիայի կուսադողկոմատը, չնայած իր Տնտիորհի կողմից

արլած մի շարք հարցումներին, վորոշում և տասնապետների գորոցի կազմակերպման հարցը քննության առնել, վորպես մասնագետներ ու վորակյալ բանվորական ուժ պատրաստելու հնդամյա պլանի մի մասը (ծիծաղ), իսկ վորովնետե պլանը մինչև այժմ քննված չե, ուստի այս ձևով ևս կառավարության հանձնարարությունն ամեններին չի կատարված:

Թույլ տվեք «ազատվել» մյուս հանրապետություններից, քանի վոր նրանց աշխատանքն առանձնապես չի տարրերվում այս ձեմի աշխատանքից:

Ի՞նչ հարց ենք դնում մենք այստեղ, և ի՞նչ հարցի վրա յենք հրավիրում կոնֆերենցիալի ամենալուրջ և ամենամեծ ուշադրությունը: Յեթե կատարման ստուգության հարցը դնենք, վորպես կենտրոնական խնդիր, ապա լոկ հայտարարությամբ սահմանափակվել չի կարելի. պետք ե այդտեղից հանել կազմակերպչական և այլ յեղակացություններ: Կազմակերպչական տեսակետից կատարման ստուգությունն ապահովելու համար անհրաժեշտ ե վորոշակի կերպով սահմանել միանձնյա պատասխանափուրյան յեկ միանձնյա կարգադրույան սկզբունք: Այստեղ իլլիչի ֆորմուլան պետք ել ավելի մեծ զնոպականությամբ իրագործել, քան այժմ, վորպեսզի այսու այդպիսի խայտառակ վերաբերմունք չինի վոչ միայն գեպի կառավարության քիչ կարեոր, այլ յերբեմն նաև չափազանց կարևոր վորոշությունը: Վերցրեք կառավարության այնպիսի յերկու վորոշում, ինչպես խորհուրդների իրավունքների ընդլայնման որենքը և գործարանալին վարչությունների իրավունքների ընդլայնման որենքը: Այստեղ կարելի յե մի շարք ցնցող մանրամասնություններ բերել:

Կարելի յի պատմել, թե ինչպես մեր գրասենյակների խորքերում ամիսներով, գեռ ավելին՝ տարիներով քաշքայի են այդ որենքները: Այստեղ մենք տեսնում ենք, վոր ապարատը, տվյալ գեղքում տրեստը, չի ուզում իր իրավունքների վորոշ մասը զիջել գործարաններին, մինչդեռ պատրաստ ե Ժողովնախորհից ստանալու ամեն մի իրավունք: Խորհուրդները, մեր խորհրդային ապարատները պատրաստ են Ժողովունչորհից վերցնելու ամեն մի իրավունք, սակայն շատ քիչ տրամադրություն ունեն իրենց իրավունքների մի մասը ստորագաս գործկոմներին հանձնելու: Անդամների այդ ամբողջ սիստեմն այնպես եր բռնել ու կաշկանդել վոր պիտի յեղավ մի ամբողջ տարի, վորպեսզի այդ որենքն սկզբեր կիրարկվել:

Յեթե գրությունն այնպես ե, վոր կուսակցական վորոշումներով հաստատված որենքը կանքում կիրարկելու համար մի տարի յի պահանջվում, ապա յես կարծում եմ՝ դուք համաձայն կլինեք, վոր հաճախ մեզ հարմար ե գալիս «ՀԵ ՁՈ ՋԻՐՈ, ԵՐԵՄԵ Ե ՀԱՅՈՒ» առածը¹: Բանն այս չե, ինչպես միքանի ընկերներ յերացում են՝ «յեկեք յերկու ժողովունակներ միացնենք, կամ բաժանենք, և ամեն բան կփոխվի». Վոչ, եյականն այստեղ աշխատանքի սիստեմն ե, կատարման ստուգությունն ե, և դրա հետ կապված՝ իրավունքների և պարտականությունների ու պատասխանատվության ձիշտ զատում, սահմանությ ե:

Վորպեսզի կազմակերպչական հարցը վերջացրած լինեմ, թույլ տվեք բերել գարձյալ մի փոքրիկ փաստ, վորը յես զիտակցարար ընտրել եմ, վորը ցույց ե տա-

Ավելին չենք ուզում, յեղածը չկորցնենք:

լիս, թե՝ գոյություն ունեցող անպատճանառավուշիան այս սիստեմն ինչ արդյունքներ ե տալիս:

Դուք գուցե ուշադրություն եք դարձրել թեզիսների մի հատուկ կետի վրա, վորոն ամեն տեսակետից ել մի չնչին, անկարեսը կետ ե: Այդ կետը վերաբերվում ե այն հարցին, թե անհրաժեշտ ե սահմանել հետեւալ կարգը.—կատարողն իր կատարած աշխատանքի մասին անմիջականորեն զեկուցում ե այն մարմնին կամ անձին, վորի համար տվյալ աշխատանքը վորոշված ե և կատարվում ե. ապա՝ կատարողը պարտավոր ե իր ստորագրությամբ վավերացնելու իր պատրաստած բոլոր զեկուցումներն ու թղթերը, անկախ այն հանգամանքից՝ թե ուր են ուղարկվում նրանք: Ճիշտ ասած՝ դուք իրավունք ունեք նկատելու, թե տարուրինակ ե, վոր յերկրի կյանքի հիմնական քաղաքական հարցերը վճռող կոնֆերենցիալին ներկայացված թեզիսներում, զերազանցապես քաղաքական նշանակություն ունեցող հարցի վերաբերյալ թեզիսներում զրված ե մի այնպիսի ավելի քան գործնական, թերևս վորեն մեկն ասի՝ «չնչին» հարց, թե ով պետք ե ստորագրի զեկուցումը: Մինչդեռ այդ չափազանց կարեոր հարց ե: Պետք ե այնպիսի կարգ սահմանել, վորպեսզի թուղթը, վորպես կանոն ստորագրի նա, ով գործը կատարել ե, նաև կոմունիստը, վորպեսզի հնարավոր լինի ստուգել:

Մենք մի շարք թղթեր ենք ստուգել, ուսումնասիրել, վորպեսզի հնարավորություն ունենանք ավելի շոշափելի, ակնառու կերպով նկատելու մեր իրականության այդ յերևութները: Այստեղ յես ստիպված եմ որինակ ըերել ՀՃՇԿ գործերից, արդարությունը պա-

հանջում ե որինակները վեցներ պետական ապարատի զանազան բնակավառներից: Հաղորդակցության ձանապարհների ժողովրդական կոմիսարիատը տեղեկանք ե տալիս Սախարովիստին այն մասին, թե այսինչ յերկաթրւղագիծը չի մտցված շինարարության պլանի մեջ:

Մի հասարակ տեղեկանք:

Յեթե ապարատի աշխատանքը գեթ նվազագույն չափով պարզ ե և զօրոշ, ապա այդպիսի մի տեղեկանք կստորագրի համապատասխան ֆինանսական բաժինը, և ուրիշ վոչվոք: Ճիշտ ե, ճիշտ ե: Իսկ ինչ է կատարվում իրականում. այն, վոր այդ թուղթը ՀՃՇԿ-ում ստորագրում են անմիջական կատարող-ճարտարագետը, ֆինանսական յենթաբաժնի վարիչը, շինարարական յենթաբաժնի վարիչը, կառուցվածքների բաժնի պետը: Մենք իրավունք ունենք հարց տալու. — իսկ յեթե այդ տեղեկությունը ճիշտ չե, այդ գեպքում այդ չորսից վ՞ո՞րն ե պատասխանատու. — վհջ վոք: Յեվ այսուղ ե ահա մեր սովորական դժբախտությունը, յերբ մենք գտնենք դժբախտությունը, նկարագրենք այն և սկսենք մեղավորին փնտուել, ապա գուրս կզա, վոր մեղավորին չի կարելի գտնել, վորովհետեւ նա թագնված ե յերեք, յերեմն ատաներեք ստորագրությունների յետեւմ, յերեմն յերեք, իսկ յերեմն ել հինգ հանձնաժողովների յետեւմ: Սուրագրություններն այնին ուստի են, այնպես խառնված ու խննված, վոր չես կարող գտնել իսկապես պատասխանատու անձին, երան, ով լավ թե վաս կատարել ե այս կամ այն աշխատանքը:

Մի ուրիշ որինակ-գարձալ ՀՃՇԿ ից: Գործուղված աշխատակցին փորմալ փոխանորդագրի հիման

վրա ոռձիկ և տրվում, և այս ստորագրում են՝ ֆինանսական լինթարաժնի աշխատակիցը, ֆինանսական բաժնի վարիչը, լինթարաժնի վարիչը և ՍԿԲ (ԱՕԾ) պետը:

Այստեղ, այս ստորագրությունների մեջ մենք տեսնում ենք այն սիստեմի արտահայտությունը, որա արտաքին նշանները, վորը մեզ ստիպել և թեղիսներում գնելու մեր խորհրդակին հիմնարկների վրա բանվորական վերահսկողություն նշանակելու հարցը։ Յեզի իրոք, հանդիմանությունն է ստանում, շրջում ու գանգատվում և, վոր շատ հանդիմանությունն և արվում և այլն, այս արդեն գտանում և ներգործության մի այնպիսի միջոց, վորը դնում են գրանները և յերեմն ել ծաղրի առարկա լին դարձնում սեփական միջավայրում—«ու դու այնքան հանդիմանությունն ես ստացել, իսկ լիս դրանից ել շատ հմ ստացել»։ Յեթե այդպիսի դեպքերում հեռացնենք մորակիալ աշխատակիցներին, ապա դարձյալ բան չի դուրս գա, վորովհետև վորակիալ աշխատողների սակավության պատճառով մենք այսոր ստուգության կարգով հեռացածին վաղն ակամա հրավիրում ենք մի այլ պաշտոնի, վորովհետև ուրիշ ավելի լավ վորակիալ աշխատողներ չունենք։

Ահա այդ իսկ պատճառով դրվում և բանվորական վերահսկողությունը մեր խորհրդային հիմնարկների վրա տարածելու հարցը, վոր վորպես բաղադրական յեղակացություն, բղիում և ստեղծված կացությունից. իսկ կացությունն այնպիս և, վոր պետք և պայքարել բյուրոկրատիզմի դեմ, պետք և կատարման ստուգություն կատարել և, վորպես կենտրոնական կազմակերպչա-

կան հարց, անհրաժեշտ և սահմանել միանձնյա պատասխանատվությունն և կարգադրություն։ Առաջմ մենք չենք կարող հիմնվել այս ասպարհուղում ունեցած մեր փորձի վրա. սակայն, ինչպես այդ ասված և թեղիսներում, ժամանակավոր բանվորական վերահսկիչ հանձնաժողովները խորհրդադին հիմնարկներում պետք և ընտրվեն խորհուրդների կողմից, ձեռնարկությունների բանվորների կողմից՝ խորհուրդների ցուցումներով, ԲԳՏ մասնակցությամբ կամ առանց դրան, ինչպես կորոշի խորհուրդը։ Անհրաժեշտ և այնպիս անել, վորպես կարեռապես կիրար կատարման ստուգությունը։

Այդ նշանակում և, վոր 2-3 շաբաթը մեկ անգամ (պետք չե ամիսներ ու տարիներ նշանակել) այսինչ բաժինն և գալիս բանվորական վերահսկիչ հանձնաժողովը, վորն անձնապես վոչ մի կերպ կապված չե տվյալ աշխատանքը կատարած անձանց հետ, և ստուգում և, ձեզ կառավարության կամ գործկոմի կամ խորհրդի կողմից այսպիսի մի հանձնարարություն և տրվել—լինչ եք արել դուք այդ հանձնարարությունը, սիրելի բարեկամներ, խորհրդատին պետության ծառայողներ. մեմ եք հանձնել դուք համապատասխան գործը, ինչպես եք հետեւ այլ հանձնարարության կատարմանը, և լինչ և դուրս լեկել այդ գործից։ Յեզ լիրը 2-3 շաբաթ այդ հանձնաժողովները կաշխատեն և հարցերը կդնեն վոչ թե մեր, ԲԳՏ առաջ, այլ գործարանի աշխատավորների առաջ (այնպիս, ինչպես այդ կատարվում և այժմ բողոքների բյուրություն կից բանվորական ատենակալների աշխատանքի նկատմամբ), ապա այդ հանգամաներ կսիսդի ապարատի աշխատավորներին լավ

մտածել վոչ թէ այն մասին, թէ ինչպես խուսափել ու քաղնվել պատասխանատվությունից, այլ այն մասին, թէ ինչպես հանձնարարություն ստանալուց հետո աշխատանքը կարգավորել, վորպեսզի ապարան իրոք կատարի անհրաժեշտ աշխատանքը լինի վոչ թէ աննպատակ կերպով իր առամեներով բուդր աղաւ:

Ահա թե ինչու բանվորական վերահսկիչ հանձնաժողովների հարցն այստեղ կապված ե կատարման ստուգության հետ, միանձնյա պատասխանատվություն սահմանելու, համապատասխան ֆունկցիաները վորոշելու և միանձնյա կարգադրության սիստեմ սահմանելու անհրաժեշտության հետ: Ժամանակավոր բանվորական վերահսկիչ հանձնաժողովների գոյությունը լիովին արդարացավ ձեռնարկություններում, լեկենք այժմ այդ հանձնաժողովները կարճ ժամանակով մտցնենք նաև մեր հիմնարկները. չթողնենք, վոր նրանք խճճին այն բոլոր հարցերի մեջ, վորոնք միասին կազմում են «բյուրոկրատիզմի դեմ պարարելու» թեման, այլ նրանց ոգտագործենք կատարման ստուգության ասպարիզում: Ստուգումից հետո անմիջապես գործարաներում ու խորհուրդներում բանվորները զեկուցում են, թե այս կամ այն մարմինն ինչպես ե կարողացել բաշխել պատասխանատվությունն ու պարտականությունները և ինչպես ե կազմակերպել կատարման ստուգությունը: Այս ձանապարհով մենք գործը մի փոքր առաջ կշարժենք:

«ՇՏԵՄՊԵԼՈՂ» ԿՈՄՈՒՆԻՍՏԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կատարման ստուգության մլուս կողմը—անձնական պատասխանատվության հարցն եւ Մենք կատարման ստուգության հետ կապեցինք կազմակերպչական

հարցը, սակայն կատարման ստուգության հետ անձնականորեն կապված և նաև մարդկանց հարցը, վորոնք զիմավորում են այս կամ այն հիմնարկը: Ահա այս կապակցությամբ ել թեղիսներում դրված ե այսպիս կոչված տեխնիկան կոմունիստաների հարցը: Այստեղ, ճիշտն ասած, այլս վոչինչ չպետք ե ավելացնել այն կարծիքին, վոր ընկ. Լենինն արտահայտել ե կուսակցության XI համագումարում, իսկ ընկ. Ստալինը՝ անցյալ տարի—կոմիտեի տական համագումարում: Մական, այդ հարցն այժմ առանձնատպես կարևոր բնույթ ե ստանում, իսկ դրա հիմնական պատճառն այն ե, վոր դասակարգային պայման այժմ ավելի ուժեղ բափով ե ծավալվել, բայց առաջ յերե ընկ. Լենինը շատ տարիներ առաջ տաել ե, թե «կոմունիստները, հիմնարկի գլուխ կանգնելով,—իսկ նրանց յերենն սարուածնիկները դիտաբեր են հիմնարկի գլուխ կանգնեցնում, վորպեսի ցուցանակ, Ֆիրմա սահան, — հանախ հիմարացվում են» (Կուսակցության XI-րդ համագումարում կենտկոմի գործունելության մասին արած զեկուցումը, XVIII հ. 2 մաս, եջ 39—40), ապա Լենինի այդ տեսակետն այժմ, ծավալվող դասակարգային պայման պայմաններում, պետք ե նորից հատուկ ուժգնությամբ լինգգել լին նրա վրա պատշաճ կերպով կենտրոնացնել ամերող կուսակցության ուշադրությունը:

Ընկ. Լենինն ասել ե, պետք ե նրանք—այդ կոմունիստները աիրապետեն այն ապարատին, վորի գլուխ են կանգնած, և վոչ թե ապարատը տիրապետի նրանց, ինչպես հաճախ մեղանում լինում ե: Իհարկե, անցած մի շարք տարիների ընթացքում կոմունիստական կազմերն աճել են. արդեն պակասում ե այն դեպ-

քերի թիվը, յիրը կոմունիստը սաբուտաժնիկի համար մի հասարակ ցուցանակի դեր ե կատարում, սակայն դրա փոխարեն, վորքան ավելի է սրվում մեզ թշնամի գասակարգերի գեմ մղվող պայքարը, այնքան ավելի է սրվում մեր թշնամիների պայքարը, վորը մղվում ե կոմունիստաներին թամբելու նպատակով, այնքան ավելի է սրվում այն հարցը, թե ով ում ե կառավարում — կոմունիստը՝ ապարատին, թե ապարատը՝ կոմունիստին: Թույլ տվեք «շտեմպելող կոմունիստների» հարցը հիմնավորել մի չափազանց լուրջ որինակով, վորը և մեզ ստիպեց թեզիսների մեջ մտցնելու վոչ միայն ֆունկցիաների բաշխման համեմատ անձնական պատասխանառություն սահմանելու հարցը, այլ նաև այն կոմունիստների հարցը, վորոնք շահմպելում են ուրիշների մըտքերը վորոնք դառնում են սաբուտաժնիկների ու մասնագետների պայմանը: Այդ՝ արդյունաբերության մեջ նոր լերեան հանված վասարարության հարցն ե. վասարար կազմակերպությունն արդյունաբերության մեջ աշխատել ե մոտ 7 տարի: Ի՞նչ ե այս ասպարիզում կազմակերպված վասարարությունը. նրա ելությունը հետեւան ե. նախ՝ ին գործարաններում արտադրությունը ծավալելիս, այդ գործարանները վերասարքավորելիս ու ընդարձակելիս, ինչպես նաև նոր գործարաններ կառուցելիս, վասարարներն ստեղծում ենին նեղեր որինակ՝ վորեն արտադրանք պատրաստելու դեպքում ամբողջ արտադրությունը ծավալվում է վորոշյալ քանակությամբ արտադրանք պատրաստելու համար անհարժեշտ չափերով. իսկ արտադրության ճյուղերից մեկը, առանց վորի չի կարելի տվյալ արտադրանքը պետք լեզած չափով պատրաստել, ծավալը վում է 2—3 անգամ պակաս չափերով:

Այսպիսով, վուրս ե զալիս, վոր կարծես թե ամեն ինչ կարգին ե, սակայն կա մի նեղ տեղ, վորին ամբողջ արտադրությունը հարկադրված ե լինում հարմարվելու, հարկադրված ե լինում իր ծավալը փոքրացնելու, համապատասխանեցնելու այդ նեղ տեղին: Այս վասարարության մի տեսակն ե:

Վնասարարության մի այլ տեսակը հետեւան ե: Արտադրությունը վերախմբավորելու անհարաժեշտության գեպքում, առանձին գործարաններում կենարունացնելու գեպքերում այդ աշխատանքն այնպիս ե կատարվել, վորպեսզի սարքավորման մի մասը ճանապարհին կորչի, վորպեսզի սարքավորման առանձին մասերն ընկնեն զանազան գործարաններ, վորպեսզի հաշվառումից հանվին այդ սարքավորման մի շարք մասերը և այլն: Ահա այդ աշխատանքի մի որինակ՝ Գոնքասի մի գործարան արտադրության սացիոնալացման նպատակով պետք ե փոխադրվեր Ուրար. այդ գործարանի սարքավորման մասերն ուղարկվում են Ուրարի համարյա բոլոր գործարանները և այդ ամբողջ գործը մնում է ծածկված, մինչև վոր ԲԳՏ քննությունը մի շարք գործարաններում լերեան ե հանում առանց վորեն ոգուտի ընկած մեքենաները: Այս ել վասարարության մի այլ տեսակն ե:

Վնասարարության լերը որդ տիպն ել այն ե, յիրը դիտավորալ կերպով նվազեցվում և ձեռնարկության կարողությունը, կազմվում ելին ձեռնարկության կարողության մասին դիտավորալ կերպով նվազեցված տվյալներ, այդ տվյալների չիման վրա կազմվում ելին անհարժեշտ միջոցների չափաղանցված նախահաշիվներ և այլն, կազմվում ելին փաստորեն ավելորդ աշխատան-

քի ծրագրեր, և հենց այդ պատճառով ել հնարավորություն չեր լինում գրամը գործազրելու այնտեղ, վորտեղ այդ իրոք անհրաժեշտ եր: Ահա, ընկերներ, ֆասարաբության յերեք տիպ, յերեք տեսակ, վորոնք մերկացվեցին և կասեցվեցին ԲԳՏ և ՊԲՎ, միատեղ աշխատանքներով:

Մեզ համար այստեղ ամենաեականն այն չե, վոր արդյունաբերության մեջ բացի շախտիականներից յեղել են նաև ուրիշ ֆլասարաբաններ. դարձանալու վորչինչ չկա այստեղ. մեզ համար կարևորն այն հարցն ե, վորը մեղնից յուրաքանչյուրին ստիպեց մտածելու: Զե՞ վոր այդ ձեռնարկություններում կոմունիստներ են յեղել, յեվ այն ել վոչ-վաս կոմունիստներ. զրանք վատ կազմակերպիչներ չեն յեղել և տնտեսության մի շարք բնագավառներում նրանք միանդամայն լավ են աշխատել: Յեվ ահա, այնուամենայնիվ, հնարավոր ե լինում ամբողջ 7 տարի ֆլասարաբությանը դրազվել և այն ել վոչ այնքան խորամանկ ճանապարհներով:

Դուք իրավունք ունեք հարցնելու, ի՞նչ առընչություն ունի այդ ամենը բյուրոկրատիզմի հետ. այդ մի սովորական, բավական հանդուգն ֆլասարաբություն և յեղել, վորի համար ել մարդիկ իրենց արժանի պատիժն ստացան: Յեթե մենք այդ հարցն այստեղ դնում ենք, և թեղիններում ել «շահմագելող կոմունիստների», կոմունիստ «պոչիկների» հարցն առանձնապես ընդգծված ե, ապա այդ կատարվում և հետեւալ պատճառով. նոր ֆլասարաբությունն ստիպում և ամբողջ կուսակցության ուշագրությունն այս անդամ արգեն զարձնել վոչ միայն այն փաստի վրա, վոր զարձալ զըտնից մեր գասակարգավին թշնամիներին ծառախոյ

բութուական սպեցների, հականեղափոխականների և մի խումբ, այլ այն փաստի վրա, վոր մի շարք կոմունիստներ, յեվ այն ել յավ կոմունիստներ, չեն նկատել այդ բոլորը և թուլ են տվել, վոր հականեղափոխականները սրանց պար ածեն: Հստ ձեի՝ մեքենայի զեկավարությունը համարյա ամբողջովին կոմունիստների ձեռքին և յեղել այսինքն՝ Ժողկոմիորհում ձեռնարկության ներկայացուցիչը յեղել և կոմունիստը, ստորագրել և (թեև վոչ միշտ) կոմունիստը... իսկ ըստ եցության:

Ի՞նչպես կարող եր այդպիսի բան պատահել. ահա մի հարց, վոր ամենասուր, ամենահամառ կերպով դրված է մեր առաջ հատկապես այժմ, յերբ դասակարգային պայտական հարցը կանգնած է մեր առաջ, վարպես ամբողջ բաղաբանության կարեվորագույն հարց, յեվ յերբ մենք արդեն սկսել ենք գասակարգավին կոխվեցը:

Թուլ տվեք այստեղ բերել մեր արեստներից մեկի աշխատանքի ներքին մեխանիկալից մի փոքրիկ որենակ, վորը ցուց ե տալիս, թե ինչպես մեր կոմունիստները պոչիկներ են դառնում: Մեր կարևորագույն արտադրություններից մեկի համար կաթսաների պատվեր և տրվում: Յես կրեմ մի փաստաթուղթ, վորը շատ ակնառու կրապով ցուց ե տալիս արեստներում աշխատող մեր կոմունիստների և մասնագետների ներքին կյանքը (թեկուզ այս օրինակները բացառություններ ել լինեն, այնուամենայնիվ նրանց հնարավորությունն իսկ շատ բան և ասում): Խոսքը վերաբերում է այնպիսի արտադրության, վորտեղ կաթսաների թիվը պայմանագործում և արտադրանքի չափերը: Կառավարական մարմինները հաճախ են ընդգծել կաթսաների պատվեր տալու ամբողջ կարեորությունը, և արտա-

զըական պլանով նախատեսված և ընդարձակել կաթ-
սաների արտադրությունը։ Սակայն ահա մարտի 2-ի
փաստաթուղթը։ Համամիութենական մեքենատեխնի-
կական սինդիկատը հաղորդում է համապատասխան
տրեստի վարչության, վորի արտադրության ընդար-
ձակումն ամբողջապես կախված է կաթսաներից։ «Յեթե
չհաղորդեք, թե ձեզ քանի կաթսա չե պետք, ինչ չա-
փերի և վարչան ժամանակում պետք ե հասցնել, ապա
մենք չենք կարող աշխատանքի ձեռնարկել»։

Այդ թուղթը քիչ կարևորություն չունի. հարցը վե-
րաբերում է տվյալ արեստի արտադրության բախտին.
արեստի ամբողջ արտադրությունը կախված է կաթ-
սաներից, իսկ արգա կիսին մեքենատեխնիկական
տրեստը նրան հայտնում է, վոր լեթե կաթսաների
թվի, չափի և հանձնելու ժամանակամիջոցի վերաբեր-
յալ տեղեկություններ չհաղորդվեն, տրեստը չի կարող
կաթսաներ տալ։

Ի՞նչ են անում այս թուղթը տրեստում։ Ահա թե
ինչ։ Մարտի 6-ին թուղթն ստանում է հիմնական շե-
նարարության բաժնում աշխատող ճարտարագետը,
վորը թուղթն ուղարկում է հալթայիթման բաժնում աշ-
խատող մի այլ մեքենագետ-ճարտարագետի, հետեւալ
մակագրությամբ. «Չտապ խոսել ինձ հետ՝ վարչու-
թյանը զեկուցելու համար»։ 10 որից հետո այդ թուղթն
ստացող ճարտարագետը թուղթը վերադարձնում է ա-
ռաջին ճարտարագետին, մակագրելով. «Բ. Մ. (անուն
և հայրանուն) ի տնօրինություն»։ Ուրիշն ճարտարա-
գետները, վոր թուղթն ստանում է «շտաբ խոսել ինձ
հետ՝ վարչությանը զեկուցելու համար» մակագրու-
թամբ, թուղթը հետ է ուղարկում նրան, վորից

ստացել և, «ի անորինություն», և այն ել 10 որից
հետո իսկ առաջին ճարտարագետը թուղթն ուղար-
կում է շինարարական-մեխանիկական բաժինը՝ «Մ.
Տ. Մ.-ի հետ համաձայնեցնելու համար» մակագրու-
թլամբ, այսինքն համաձայնեցնելու համար այն
մարմնի հետ, վորը, ինչպես մենք տեսանք, գրել եր՝
թեթե չհայտնեք, թե ձեզ ինչպիսի կաթսաներ են պետք,
չենք կարող կաթսաներ տալ։ Վերջին ճարտարագետն
ստանում ե այդ թուղթը և մակագրում. «Ստացա 1929թ.
մարտի 20-ին, ժամի 2-ին»։ Թուղթն այդ մակագրու-
թլամբ ել վերջերս գտնվել է հիշալ ճարտարագետի
մոտ՝ շնորհիլ ԲԳՏ քննության։

ԶԵՊՈՐ տրեստի բախտը կախված էր կաթսանե-
րից. Սինդիկատը նրան գրում է, վոր լեթե անհրա-
ժեշտ ավագներ չհաղորդվեն, ապա կաթսաներ չեն կա-
րող տալ մինչդեռ մարդիկ այդ թուղթը փուտրովի
գնդակի պես այս ու այն կողմ են նետել, ծիծաղել են
արտագրության գլուխ կանգնած կոմունիստի վրա։
Բայց թուղթը, այնուամենայնիվ, վարչության նախա-
գահին չի հասել.

ԶԱՅԱ. — Իսկ վորտեղ եր վարչության նախագահը։
Յակովիկ. — Հարցն ել հենց այդ հ. Նա մի ազնիվ
կոմունիստ է, կուսակցության հին անդամ, շատ լավ
բանոր, նրա մասին չի կարելի վատ բան ասել, բա-
ցի մի բանից, վորի մասին ել այժմ չես խոսում եմ
(իսկ այդ ել վորոշում ե այն հարցը, թե վորքան պետ-
քական և այս կամ այն կոմունիստը զեկավարի դեր
ստանձնելու համար)։ Կոմունիստը պետք է ստուգի
կատարումը, նա պետք է զեկավարի իրեն լինթակա-
անձանց և պետք է հիշի, վոր նա ապրում ու աշխա-

տուռ և պաստիարգային պալքարի պարմաններուն։ Ազաեղ հարցը լոկ նրան չի վերաբերում, թե պետք է վորոշ չափով կաթսաներ պատվիրել այսինչ տրեստին, այլ հարցը վերաբերում է համաշխարհային բուրժուազիայի գեմ մղվող պալքարին, այն բուրժուազիայի, վորը չի ուզում թուլ տալ, վոր մեր ուղղմական արտադրությունը զարգանա։ Տվյալ գեպքում հարցը վերաբերում է ոռոսական բուրժուական ինտելիգենցիայի գեմ մղվող պալքարին, այն ինտելիգենցիայի, վորի վորոշ շերտերը ձեռք են մեկնում համաշխարհային բուրժուազիային և աշխատում են վիճեցներ մեր արտադրությունը, մեր շինարարությունը։ Ահա, յերբ կոմունիստի դասակարգային հոռառնորդունը կորչում է, յերբ անհետում է պատասխանափուրյան գիտակցությունը, այն ժամանակ կատարման սուզգության փոխարհութեն սացգում է կոմունիստ-«պոյշիկ»։ Գուցե այս բառն ընկ. Ստալինն է մայրել մեր թեղիսների մեջ։ Համապատասխան լեզրակացությունը նշված է թեղիսներում։ Հարցը վերաբերում է նրան, վոր պետք է սովորել և չպետք է մեծամտել ալյապին մենք անխոսափելիորեն կտառնանք վարել մասնագետի պոչիլը։ Պետք է սովորել վոչ միայն այն մոքով, վոր անպայման ուսումնասիրենք այսքան թվով զրքեր, այլ պես և սովորել կառավարելու արվեստը, պետք է այնպես սովորել, վորպեսզի քեզ չխարեն, վորպեսզի խոսքով վոչ մի բանի հագաւասա, վորպեսզի այս կամ այն թուղթն ստորագրելուց առաջ ամենից առաջ հարց տաս՝ ինչու։ Բոլոր վասարական կործերի գասը չի կարող իզուր անցնել, իսկ այդ գասից մենք պետք է

այն լեզրակացությունը հանենք, վոր վնասարարության զործերի լետեռում թափնված է մեր վրա հարձակվելու փորձ անող բուրժուազիան, վորը յերեկոն ոգավում է կոմունիստական անունից, համապատասխան կոմունիստ-ղեկավարի կոմունիստական կոչումից, դարձնելով այդ անունն իր համար ծածկոց, ցուցանակ։ Իսկ այս կացությունը չի կարող անհանգութելի չհամարվել։

Ըսկերներ, յես չդիտեմ, իմ շարադրանքի ձևը բարկանաչափ պարզ ու համոզիչ եր, թե՛ վոչ, սակայն յես կարծում եմ, վոր իմ արձարձած հիմնական հարցը համենայն գեպս հասկանալի յե։ Մենք արտաքուստ կարծես թե տարբեր հարցեր միացնում, դարձնում ենք մի կենարունական հարց-կատարման ստուգության հարց։ Վոչ մի կերպ չի կարելի կատարումը փաստորեն ստուգել, յեթե չվորոշվի կաղմակերպչական հարցը, յեթե չլուծվի պարտականություններ ու իրավունքներ և միանձնյա պատասխանատվություն սահմանելու հարցը։ Յեզ միաժամանակ կատարման ստուգության հարցը կոմունիստների աջիատանքի վորակի հարցն ե, նրանց պատասխանատվության հարցն ե, պատասխանառու գեպքերում նրանց մղած դասակարգյին պայմանը հարցն ե։

Միասնական այս ինդը լերըրդ մասի առանձին կարենությունը, նրա բացառիկ նշանակությունն այն ե, վոր մեր ապարատներում կոմունիստների թիվը ամենին ել փոքր չե, մենք տվյալներ ունենք, վորոնք ցուց են տալիս, թե մենք վորքան կոմունիստունինք։ Կոմունիստները կաղմում են ծառայողների ընդհանուր թվի 11,7 % ը. քիչ և այս թիվը, թե քիչ չե։

Զայներ.—Քիչ չե, բավարար ե:
Յակովիլի. —Ծառայողների ընդհանուր թվի 11,7
0/0-ը վոչ թե պատասխանատու աշխատավորների, այլ
ամբողջ ծառայողների թվի 11,7 0/0-ը: Իսկ լիթե վերց-
նենք արդյունաբերության կառավարման և վարչական
ապարատն առանձին-առանձին, ապա կտեսնենք, վոր
վարչական բնագավառում կոմունիստները կազմում են
ծառայողների ընդհանուր թվի մեկ քառորդը, իսկ ար-
դյունաբերության և շինարարության մեջ—14 0/0-ը,
այսինքն՝ բավական զգալի տոկոսը:

Զայն. —Մինչև անգամ շատ բավարար տոկոս ե:
Զայներ. —Մինչև անգամ շատ քիչ ե:
Յակովիլի. —Քիչ ե, ընկերներ, վճչ, իմ կարծիքով
քիչ չե: Զմոռանանք, վոր մենք համեմատում ենք ծա-
ռայողների ընդհանուր թվի հետ: Մեր նպատակն այն
չե, վոր այդ տոկոսը հասցնենք 24-ի, մեր նպատակն
այլ ե. կատարման ստուգություն, մեկ, իրավունքնե-
րի, պարտականությունների և պատասխանատվության
բաշխում, իերկու, և այն, վոր կոմունիստներն ուրիշ-
ների մժերը չօժիվեն, չդառնան պոչիկներ, նետեվա-
պես՝ կոմունիստներն ընդունակ լինեն դասակարգային
քենամիներին հականարկած տալու, յերեք:

ԱՐԴՅՈՒՔ ՎԵՐՍԱՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՇԱՏՈՒԹՅՈՒՆՆ Ե ԳԼԽԱՎՈՐ ԳՃԲԱԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծնկերներ, այստեղ կարելի յե տարբեր ձևով մո-
տենալ շոշափած հարցերին:

Մենք այսոր «Տօրց.-պրոմ. գազետա»-ում տեսնում
ենք այդ հարցերին մի փոքր այլ տեսակետից մոտե-

նալու փորձ: Այդ թերթում մեր լավ տնտեսավարնե-
րից՝ մեկը, «Յուգոստալյա-ի վարչության նախագահ
ընկ. Բիրմանը լուրահատուկ ձևով ե զնում բյուրոկ-
րատիզմի դեմ պայքարելու և պետապարատը բարե-
լավելու հարցը: Մեզնից շատերն են ճանաչում ընկ.
Բիրմանին, վորպես լավ տնտեսավարի, վոր մտու
տրեստների վարչությունների նախագահներից յերբեք
վատ չի աշխատում, զուցե և ավելի լավ և աշխատում: Մակայն, յերբ հրապարակվեցին բյուրոկրատիզմի գեմ
պայքարելու վերաբերյալ կենտկոմի թեզիսները, վո-
րոնց մեջ առանձին սրությամբ ու ուժգնությամբ են
ընդգծված այդ յերեք հարցերը, ընկ. Բիրմանը հարցն
ալսպես և գնում: «Եւականն այն ե, վոր վերահսկո-
ղությունը չափազանց շատ ե, հիմնական պատճառն
այն ե, վոր մեզ խանգարում են ԲԳՏ և արհմիություն-
ները»: Մոտավորապես այսպիսի ճառ արտասահեց
ընկ. Բիրմանը նաև ԺՏՊ պլենումում:

ԲԳՏ և արհմիությունները խանգարում են ընկ.
Բիրմանին և չեն թողնում, վոր նա վարի տնտեսու-
թյունը. Փհաքկե, յերբ տնտեսավարը կարծում ե, վոր բո-
լոր բացասական յերեվույրների ու անհաջողությունների
պատճառը բանվորների, արհմիությունների յեվ ԲԳՏ կող-
մից կիրարկվող վերահսկողության շատուրյունն ե, ապա
այդպիսի տնտեսավարը վոչ թե կարծիքն ե հայտնում,
այլ ինչ վոր մեկի բելադրած բառերն ե կրկնում:

Թույլ տվեք դրա ճշտությունը լիովին ապացու-
ցել Յուգոստալի աշխատանքի վերաբերյալ մի որի-
նակով: Ծնկ. Բիրմանը մեր սեսամի հիմնական արա-
տը համարում ե այն, վոր թե նրա անձնական և թե
նրա իրավասության յենթակա մասնագետների աշխա-

Զայներ.—Քիչ չե, բավարար ե:

Յակովիլիվ.—Ծառայողների ընդհանուր թվի 11,7 ٪/օ-ը վոչ թե պատասխանատու աշխատավորների, այլ ամբողջ ծառայողների թվի 11,7 ٪/օ-ը: Իսկ լիթե վերցնենք արդյունաբերության կառավարման և վարչական ապարատն առանձին-առանձին, ապա կտևնենք, վոր վարչական բնագավառում կոմունիստները կազմում են ծառայողների ընդհանուր թվի մեկ քառորդը, իսկ արդյունաբերության և շինարարության մեջ՝ 14 ٪/օ-ը, այսինքն՝ բավական զգալի տոկոսը:

Զայն. —Մինչեւ անդամ շատ բավարար տոկոս ե:

Զայներ.—Մինչեւ անդամ շատ քիչ ե:

Յակովիլիվ.—Քիչ ե, ընկերներ՝ վճչ, իմ կարծիքով քիչ չե: Զձոռանանք, վոր մենք համեմատում ենք ծառայողների ընդհանուր թվի հետ: Մեր նպատակն այն չե, վոր այդ տոկոսը հասցնենք 24-ի, մեր նպատակն այլ ե. կատարման ստուգություն, մեկ, իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության բաշխում, յերկու, և այն, վոր կոմունիստներն ուրիշ ների մեքերը շշտեմպելին, շդառնան պոշիկներ, նետեվապես՝ կոմունիստներն ընդունակ լինեն դասակարգային քենամիներին նականարդած տալու, յերե՛ք:

ԱՐԴՅՈՒՔ ՎԵՐՍԱԾՎԱՊԼՈՒԹԱՆ ՇԱՏՈՒԹՅՈՒՆՆ Ե ԳԼԽԱՎՈՐ ԴՓԲԱԽՏՈՒԹՅՈՒՆ

Ծնկերներ, այստեղ կարելի է տարբեր ձևով մոտենալ շոշափված հարցերին:

Մենք այսոր «Տօրց.-պրոմ. բազետա»-ում տեսնում ենք այդ հարցերին մի փոքր այլ տեսակետից մոտե-

նալու փորձ: Այդ թերթում մեր լավ տնտեսավարներց՝ մեկը, «Յուգոստալ»-ի վարչութեան նախագահ ընկ. Բիրմանը յուրահատուկ ձևով ե զնում բցուրոկրատիզմի դեմ պարաբելու և պիտապարատը բարելավելու հարցը: Մեզնից շատերն են ճանաչում ընկ. Բիրմանին, վորպես լավ տնտեսավարի, վոր մյուս տրեստների վարչությունների նախագահներից յերեք վատ չի աշխատում, գուցե և ավելի լավ ե աշխատում: Սակայն, յերբ հրապարակվեցին բցուրոկրատիզմի դեմ պարաբելու վերաբերյալ կենտկոմի թեզիսները, վորոնց մեջ առանձին սրությամբ ու ուժգնությամբ են ընդգծված այլ յերեք հարցերը, ընկ. Բիրմանը հարցն այսպես ե զնում: «Եւականն այն ե, վոր վերահսկողությունը չափազանց շատ ե, հիմնական պատճառն այն ե, վոր մեզ խանգարում են ԲԳՏ և արհմիությունները»: Մոտավորապես այսպիսի ճառ արտասանեց ընկ. Բիրմանը նաև ԺԳԽ պլենումում:

ԲԳՏ և արհմիությունները խանգարում են ընկ. Բիրմանին և չեն թողնում, վոր նա վարի տնտեսությունը. ՚իհարկե, յերբ սետեսավարը կարծում ե, վոր բոլոր բացատկան յերեվույրների ու անհաջողությունների պատճառը բանվորների, արհմիությունների յեվ ԲԳՏ կողմից կիրարկող վերահսկողության շատուրյունն ե, ապա այդպիսի սետեսավարը վոչ թե իր կարծիքն ե հայտնում, այլ ինչ վոր մեկի բելադրած բառերն ե կրկնում:

Թույլ տվեք գրա ճշտությունը լիովին ապացուցել Յուգոստալի աշխատանքի վերաբերյալ մի որինակով: Ծնկ. Բիրմանը մեր սետեմբի հիմնական արտաքին ամարում ե այն, վոր թե նրա անձնական և թե նրա իրավասության յենթակա մասնագետների աշխա-

տանքը վերահսկողության և յենթարկվում բազմաթիվ
անձանց ու մարմինների կողմից:

Սակայն ահա փաստերը:

Ներմուծված մեքենասարքի ոգտագործության ա-
ռաջին հետազոտությունը: Այդ մեքենասարքի մեծ
մասը, ինչպես պարզվել է, հետազոտության մոմենտին
ոգտագործվելիս չի լինել:

Վորոշ բան հնարավոր յեղավ ուղղել, մասնավո-
րապես գործից հեռացվեց գլխավոր պատճառը, վորը
մի քանի ժամանակից հետո ձերբակալվեց, վորպես
վնասաբար: Յերկրորդ հետազոտությունը: Բանն այն
է, վոր մենք հնգամյակի ընթացքում մետաղագործու-
թյանը մեկ միլիարդ ուղղվի յենք հատկացնելու. սա-
կայն այդ գումարը պետք է գործադրել նպատակա-
հարմար ձևով: Բոլոր հին գործարաններից պետք և
հիմնական վերակառուցման յենթարկել միայն լավա-
գույնները. շատ կասկածելի է, թե այդ տեսակետից
կարո՞ղ է լավ համարվել Ստալինովի գործարանը: Ահա
վեճն այս մասին է, իսկ Բիրմանն իր հողվածում այն-
պես է ցուց տալիս, թե իբր խոսքը վերաբերում է
մեկ դոմենայի և վոչ թե հարցուր միլիոնի չափ մի գու-
մար գործադրելուն:

Յերրորդ հետազոտությունը: Բիրմանը լուսթյան
և տալիս այն հարցը, վոր ԲԳԾ կատարած վերջին հե-
տազոտության հետեանքով հարց է դրված դոմենայի
արտադրողականությունը հնգամյակի վերջին ավելաց-
նել վոչ թե 12 % -ով, ինչպես ծրագրված է Յուգո-
ստալի հնգամյակով, այլ 40 % -ով, իսկ այս նշանա-
կում է, վոր ծրագրով նախատեսված քանակությունը
մետաղ ստանալու համար կարելի չե ավելի փոքր թվով
նոր գոմիաներ կառուցել:

Ահա ինչպես ե վորոշում Յուգոստալի հնգամ-
յակը ԲԳԾ խորհրդառու՝ գերմանական հայտնի մաս-
նագետ Կարլները:

«Յուգոստալի գործարանները գիտելիս լիս այն
տպավորությունն ստացա, վոր լուրաքանչյուր գործա-
րան մշակում է իր պլանը և պաշտպանում է սեփա-
կան շահերը, ամեններն հաշվի չառնելով մըուս գոր-
ծարանների շահերն ու պլանները, կարծես թե գրանք
ինքնուրուց մասնավոր ձեռնարկություններ են և
մրցում են մնացած բոլոր գործարանների հետ: Բնա-
կանաբար, առանձին գործարանների պլաններն այդ-
պես սեպարատ ձևով կազմելու վրա շատ աշխատանք
և գործ գրվում:

Յուգոստալի հնգամյա պլանն այն տպավորու-
թյունն և թողնում, վոր առանձին գործարանների
մշակած այդ բոլոր նախագծերը մեքենաբար մացված
են Յուգոստալի շինարարական մեծ պլանի մեջ. այն-
պիսի տպավորություն է ստացվում, վոր կարծես թե
Յուգոստալն իր գործարանների հետ այնպես է վար-
վել, ինչպես մի սիրառատ հայը, վոր տասներկու զա-
վակ ունի և չի ուղղում նրանցից և վոչ մեկի տարբեր-
տարբեր ցանկությունները մերժել Անթուլատրելի յե-
նախագծերն այնպես քննել, ինչպես ընթացիկ փոստն
են նաևում. այդպիսի գործունելությունը Գերմանիա-
յում ծաղրանքով անվանում են «նամակատարի» գոր-
ծունելություն:

Վերոհիշյալի հիման վրա թույլ տվեք չհավատալ
ընկ. Բիրմանին, յերբ նա ասում է, թե իւականն այն
չե, վոր մեզանում բացակայում ե սպագործության
ստուգությունը, վոր մեզանում պարտականություն-

ներն ու պատասխանատվությունները բաշխված ու զատված չեն, վոր մեր կոմունիստները չափազանց հաճախ են հավատում սարստաժնիկների խոսքերին, այլ ելական պատճառն այն է, վոր մեղանում չափազանց շատ և վերահսկողությունը. վոր արհմիությունները խանգարում են և ալին, և ալին:

Վոր ընկ. Բիբմանի այս հարցում բոնած դիրքը պատահական չե, այդ յերեսում և նույն «Տօրց.-ՌՈՐ. ՌԱԶԵ»-ից, վորտեղ տպված և նույն բովանդակութամբ մի այլ հոդված - «Ինչպես են բջիջները մեզ խանգարում կառավարելու»: Միթե ընկերները լուրջ կերպով կարծում են, վոր բջիջներն ու արհմիությունները նրանց խանգարում են. փորձենք իսորհուալին պետության մեջ կես տարի կառավարել առանց բջիջի և արհմիության. այդ գեպքում ավելի շատ բուրողատիզմ կլինի, թե ավելի քիչ, և արդյոք դուք կկարողանանք արդպիսի պայմաններում աշխատել: Արդյոք ավելի չե լինի այն գեպքերի թիվը, յերբ կծրագրվի արտադրողականությունը հինգ տարվա ընթացքում բարձրացնել $12,8^0/0$ -ով, մինչեռ գերմանական փորձը ցուց և տալիս, վոր տեխնիկապես կարելի լի բարձրացնել $40^0/0$ -ով. կարեք կամ ապացուցելու, վոր այդպիսի գեպքերի թիվը ավելի շատ կլինի: Պետք և հրաժարված գեպքերի թիվը ավելի շատ կլինի: Պորպեսի հասժեպես ընկ. Բիբմանի տեսակիտից, վորպեսի հասկանաք, թե ինչու կենակոմի թեղիսներում ծանրության կենարուն այն չե, վոր չափազանց շատ և բջիջի «խնամակալությունը», չափազանց շատ են աշխատում արհմիությունները, և կամ շատ և վերահսկողությունը, այլ այն, վոր պետք և ստուգել կատարումը, պետք և անձնական պատասխանատվություն սահմանել և պետք

և պակասեցնել այն կոմունիստների թիվը, վորոնք սարստաժնիկների ու վեաստուների պոչիկներ ևն դառնում:

ՈՒՄ Վ.ՏԱ.ՐԵԼ ԽՈՇՀՅՈՒՅՅԻՆ Ա.ՊԱ.ՐՍ.ՏԻՑ

Ընկերներ, վերջապես այս հարցի հետ և կապված խորհրդավին ապարատի գոման հարցը: Թույլ տվեք այս հարցի վրա քիչ կանգ աւանել, քանի վոր թեղիսներում դրված բոլոր հարցերից այս հարցը, թերեւ, ամենից շատ և քննության առնված և այս ասպարիզում մենք արգեն վորոշ փորձ ունենք: Խորհրդավին ապարատի գոման, նրա անձնական կազմի հարցը նույնպես գասակարգավին պայքարի հարց և, զտման հարցը այն հարցն ե, թե պետական ապարատի աշխատակիցը ում կամքն և կատարում, — իշխանության տեր բանվոր գասակարգի կամքը. թե բանվոր գասակարգի գեմ պայքարող կուլակի ու նեպմանի կամքը: Մենք զտման գործում արգեն բավականաշատ փորձ ունենք: Մինչև այս տարվա սկիզբը զտված և մոտավորապես 20 հազար մարդ, վորոնցից մոտ 1100 մարդ Վլադիմիրի նահանգում, 1200 ը — Յարոսլավի նահանգում, 1300 մ. — Ռյազանի նահանգում, և բավական մեծ թվով զտված են չուռախալին կովկասում, Արխանգելսկի նահանգում և ալին: Այն հանգամանքը, վոր համեմատաբար սահմանափակ թվով վայրերում զտման փորձի կարգով հնարավոր են գտել մոտավորապես 20000 մարդ զտել, — ցուց և տալիս, թե վորքան և հասունացել զտման անհրաժեշտությունը:

Այդ անձանց կեսը, զուցի և ավելին, անցել ե

այլ հիմնարկներ։ Հարցն այստեղ այն ե, թե ում զտել
և ինչպես անել, վորպեսպի զտուժը, ինչպես ասում են,
զուր տեղը ջուր ծեծել չդառնա, չդառնա Սիզիփոսի
աշխատանք, և մի գոնից զուրս արվածները մտուս
գոնից ներս չմտնեն։

Ում պետք ե զտել Մենք ուզում ենք խորհրդա-
ցն ապարատը զտել ինչպես ասված ե թեզիսներում,
այլասեռված, խորհրդալին որենքներն աղավաղող
տարրերից, կուլակի ու նեպմանի հետ մերձեցող ու
հաշտող տարրերից, այն տարրերից, վորոնք խանգա-
րում են ձգձգութիւների դեմ մղվող մեր պատքարին, պաշտ-
պանում, քողարկում են այդ ձգձգութիւնը, մհծամտո-
րեն, չինովնիկաբար ու բյուրոկրատաբար են վերա-
բերգում աշխատավորների կենսական կարիքներին,
մենք ուզում ենք ապարատը զտել զեղծարաններից,
կաշառակերներից, սարուտածնիկներից, վասատունե-
րից և ծուլյերից։

Կուտակցությունը և Խորհրդալին իշխանությունն
ամեն կերպ գնահատում և խրախուսում են ամեն մի
ազնիվ ու բարեխիզճ աշխատավորի, ուստի զտումը
պետք է կատարվի ամենից առաջ յեվ գլխավորապես ա-
խատանի վորակի գնահատության հիման վրա յեվ վոչ քե-
րս դասակարգային ծագման նշանների։

Պրոլետարական ծագումը և կոմունիստական կու-
տակցության պատկանելու հանգամանքը վաչ մի զեպ-
ստկություններ։ Առաջին հերթին պետք է 1929 թ. ըն-
վելություններ։ Առաջին հերթին պետք է թացքում զտումը կատարել աշխատավոր մասսաների
թացքում զտումը կատարել աշխատավոր մասսաների (հողա-
հետ անմիջականորեն կապված հիմնարկներում (հողա-
ժողովածատի մարմիններ և այլն)։

Այն անձանց, վորոնք զտման հանձնաժողովների
կարծիքով կարող են զեռ ուղղվել, պետք ե փոխադրել
ավելի ցած աշխատանքի, իսկ այն անձանց, վորոնք
գտնում են առանց պետական ապարատում աշխատելու
իրավունքի (վարութանակով կամ՝ առանձնապես չա-
րամիթներ՝ ընդիմիչը) պետք ե կատեգորիկ կերպով արգե-
լել այլ աշխատանքի յեվ ուրիշ հիմնարկ ընդունելով, յեվ
նրանց ցուցակները պետք ե մասուլում նրապարակել ի
գիտուրյուն ընդիմանուրի։ Յեթե մենք, միայն այս տե-
սակետից յեկելով, զտումը կապենք կատարման ստու-
գության հետ, ապա այդ կնշանակի, վոր մենք պետք ե
մեր ապարատից վտարենք, քշենք նրանց, վորոնք չեն
կամենում կամ չեն կարող մեր որենքներն ու դիրեկ-
տիվները կատարել, պետք ե վտարենք այն մարդկանց,
վորոնք այս տեսակետից անհուսալի յեն։ Յեթե մենք
կարողանանք տալ «գալի տոմսի» պես մի բան, ապա
այստեղ քաշվելու վոչինչ չկա։ Յեթե բուրժուազիան
կոմունիստների ու բանվորների համար ունի սկ ցու-
ցակներ, ապա մենք ել կարող ենք պետք ե տանք գալի
տոմսերի պես մի բան՝ թեկուզ ամենասահմանափակ
թվով անձանց, վորոնք, ինչպես փորձն ու ստուգումն
ե ցուց ավել, չեն կարող խորհրդալին ապարատում
այնպես աշխատել, ինչպես մեր պետք ե, կամ չեն կա-
րող մեր որենքներն ու դիրեկտիվները կատարել։

Ամբողջ հարցն այստեղ այն ե, վոր մենք կարո-
ղանանք խորհրդալին ապարատի զտումը կատարել
վորքան հնարավոր և՝ քիչ սխալներ գործելով։ Ի՞նչ ե
ցուց ավելս այս ապարատում ունեցած մեր փորձը,
այն, վոր կան վորոշ տիսկե մի ամբողջ շարք մարդկեր
վորոնք անպայման յենթակա յեն զտման։ Վերն ե

այդ մարդկանց բնորոշ տիպը։ Ահա, որինակ, նրանցից մեկը։ Սմոլենսկի նահ։ Նախկին կալվածատեր, վորը հողաշնալար և լեզել և իր ձեռքով իրեն կալված-հող և հատկացրել։ այնքան «պարտաճանաչ» կերպով և աշխատել, վոր մինչև դուռմը մի շարք հանդիմանություններ և ստացել. չքափորները նրանից գժգոհ են լեզել. զբանից հետո դարձյալ գործի յե ընդունվել և ապա զտման և յենթարկվել ու հեռացվել. այնուհետև դատապարտվել և պաշտոնեական կեղծիք կատարելու համար։ Ահա այս տիպն անպայման պետք և մեզանից սկ տոմս ստանա, և նրա աշխատանքալին գրքուրի մեջ պետք և նշանակվի, վոր նա իրավունք չունի խորհրդային հիմնարկներում աշխատելու, նրա անունը պետք և մասնություն հրապարակվի ի գիտություն ընդհանուրի։ Այս ամենը, ընկերներ, պետք և կատարել բաց կերպով, հրապարակով, առանց ճնշվելու ու, քաշվելու։ Նույնպիսի մի տիպ և լեզել նաև մի պետառի քարտուղար, դարձյալ նախկին կալվածատեր, վորը գերմանական ոկուպացիայի ժամանակ տանջել ու խորտանգել և գյուղացիներին. ինարկե, այսպիսի «բուրեղացած», իր գույնը պարզած անձանց ևս անհրաժեշտ և քշել մեր ապարատից։

Ծխազանի նահանգի ժողովրդական դատարաններից մեկի քարտուղարը, վոր նախկին խոշոր տնտեր և լեզել, կաշտակերության համար դատապարտվել և, դատականի փաստաբանությամբ և պարատել և այն։

Մի ինչ վոր հաշվապահ գյուղացիների դեմ դատական գործ և հարուցում միքանի կոպեկների համար, սա յել լերբեմն կամավոր և լեզել սպիտակ բանակում։ Անապատի «Վաղասպես» տրեստի ինչ վոր վարիչ

տրեստի հաշվով ելեկտրականություն և անցկացնում լեկեղեցին ու տաճարը, նրանցից ամսական վերցնում և 80 կ., իսկ ծառալողներից ու բանվարներից - 1 ու 30 կ. և լեկեղեցում փչացած հաշվիչ և դնում։

Վոլինի շրջանի դատական հողալին հանձնաժողովի աշխատակիցներից մեկն այնպիս և ոկնում նախկին կալվածատեր իր հորը, վոր գյուղացիների գեմ հարուցված դատական գործը շարունակ հոր ուղած ընթացքն և ստանում, չնայած այն բանին, վոր դատարանում գործը 12 անգամ վճռվում և գյուղացիների ոգտին։ Ինչ-վոր կեղծ մասնագետ, վոր լերբեմն ծառայել և սրբազն սինոդի անտեսական բաժնում, աշխատում և Հոգժողկոմատում, վորպես վորակալ անտառագետ, ավարտել և հոգեոր ճամարան (Ծիծաղ)։ Պետական բանկի Բուլղուլուկի զրասենչակի կուսակցական վարիչն անկուսակցական հաշվապահի հետ միատեղ զրասենչակ և հիմնում, վորտեղ կեղծ առևտուն կան մուրհակների զրավականով մասնավորներին զրամական միջոցներ և տալիս։ Մի կոմունիստ-Սիրիրի գալակացին գործկոմներից մեկի Փինանսական մասի զավառակացին գործկոմներից մեջ գյուղացիներից վարիչը, ծագումով չքավոր գյուղացի, գյուղացիներից 300 զիմում և ստանում անկանոն հարկածան դեմ, սակայն և վոչ մեկը չի քննում. նրա մոտ և լինում մի առևտուրականից 3000 ու գանձելու գործը, սակայն վուշնչ չի ստանում։ Թեև նա կոմունիստ և, չքավորի զավակ և այն, սակայն դառնում և առևտուրականի գործակալը։

Սրանք բոլորն ել ծառալողների այն խմբին են պատկանում, վորոնց պետք և պետապարտից քշել։ Յես հատկապես վերցրել հմ նրանց, վորոնց պետք և

զտել ընդմիշտ, և վորոնց թվում կան նաև կոմունիստաներ: Այս որինակներն ամեն կողմից լուսարանում ու պարզում են կենտրոնի թեղիսների այն մասը, վորտեղ ասլած ե, թե ում պետք ե զտել:

Սակայն, իհարկե, կատարված մասնակի զտման ժամանակ բազմաթիվ սխալներ են կատարվել. այդ սխալներն այն տեսակետից են ոգտակար, վոր միանդամից ցուց են տալիս, թե ինչից պետք ե խուսափել՝ հետագայում ամբողջ զտումը չվարկաբեկիլու համար:

Ահա այն սխալներից մի քանիսը, վորոնք հետագայում ուղղված են: Մի նախկին սպիտակ սպա, վոր զորակոչված ե յեղել կալչակի բանակը, առակու գործարանի գործակատար, կոշկակարի տղա, վոր հետո վորպես կամավոր ծառաչել ե կարմիր բանակում հեռացվում ե գործից, վորպես նախկին սպա, չնայած գործարանի 145 բանվորի բողոքին:

Ուրիշ որինակ, Խորհրդագլխին իշխանության որոք անընդհատ աշխատած մի հարկադին տեսուչ հեռացվում ե գործից, վորպես չինովիկի տղա և նախկին սպա (1917 թ. հոկտեմբերի 1-ին ավարտած պատուշչիկ), չնայած այն բանին, վոր ամբողջ արհմիութենական կազմակերպությունը, ծառալողներն ու զեկավարները հայտնում են, թե լավ ե աշխատում:

Կենտրոնական Բանկովի գանձապահը՝ մի բարեխիղճ ծառալող, ակտիվ արհմիութենական աշխատավոր, գործից հեռացվում ե, վորպես տնատեր, մինչդեռ ունի ընդամենը 1600 ու արժողությամբ մի տուն, այն ել՝ ուրիշ էքրեք հոգու հետ միատեղ:

Մի նախկին քահանա, վորը քահանայությունից

հրաժարվել ե դեռ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, անաստվածների միության ակտիվ անդամ, վոր հակակրոնական պլրոպագանդա լեռ մզում, հեռացվում ե, վորպես նախկին տերտեր:

Գյուղատնտեսական հարկի տեսուչ, մի նախկին սպա, վոր զորակոչվում ե սպիտակ բանակ և այնտեղից փախչում ե կարմիրների մոտ, 4 տարի շարունակ ծառացում ե կարմիր բանակում, բարեխիղճ կերպով աշխատում Պիտապում, գործից հեռացվում ե, վորպես նախկին սպա:

Մի մեքենագրուհի, վոր ծնվել ե 1903 թ., նախկին գնդապետի աղջիկ, վորի հայրը մեռել ե գերմանական պատերազմում, միանգամայն բավարար տշխատող, հեռացվել ե գործից, վորպես գնդապետի աղջիկ: Այսպիսի որինակներ չափազանց շատ կարելի իերերել:

Յեթե յես այս որինակները բերում են, ապա միայն նրա համար, վորպեսզի այս համեմատաբար համոզիչ և կենդանի որինակներով բացատրած լինեմ, թե ինչու կենակումի թեղիսներում ընդգծված ե, վոր պետք և ամենից առաջ զնանատեղ աշխատանքը, յեվ վոչ թե նկատի ունենալ միայն սոցիալական ծագումը:

Այս որինակները պետք ե ամենքն աչքի առաջ ունենան, վորպեսզի չգնան նվազագույն դիմագրության գծով, չպարկաբեկն, չաղախաղն ամբողջ զումը, յեվ զում կատարելու փոխարեն չսկսեն Տերտերի ազգական գործականետին նետապնդել: Այդ չի նշանակում, իհարկե, վոր չպետք ե սոցիալական ծագումը նկատելունակ, իհարկե, իր ծագումով մեզ քննամի դասակարգին պատկանող մարդի ավելի շուրջ կուլակի ու նեպմանի

գործակալ կդառնա. այս հասկանալի յէ, սակայն միայն այնքան, վորքան նա դառնում է այդպիսի գործակալ, վորքան կատարման սուուզուրյան կարգով հաստաված է, վոր խորհրդակին ապարատի սլյալ աժխատակիցն անհամապատասխան է, վորքան պարզված է, վոր երան պետք է վոնդել, անխնա կերպով վոնդել: Եթե պետք ե այդ ավելի լավ ձևով կատարել, քան այժմ ենք կատարում, պետք ե այնպիսի պատվարներ ստեղծել, վոր դուժաներն այլս չկերպառնան և խորհրդագին ապարատը չընդունվեն: Այլապես կատացվի այն, ինչ վոր տեղի յի ունեցել նահանգներից մեկում. կես տարի առաջ փորձի կարգով զտում են 1500 մարդ, իսկ վերջերս մենք ստուգեցինք, թե ինչ իեղան դրանք, ստուգեցինք աշխատանքի բորսայի գործերը և պարզվեց, վոր դրանք բոլորն ել դարձաւ իրենց գործին են ընդունվել: Այս տեսակետից ավելի լավ է, վորպեսզի անվայրման ամեն մի նահանգում 1500 հոգի չգտնեն, սակայն յերե պետք է զել, որինակ, 300 կամ 600 մարդ, ապա այնպես զել, վորպեսզի երանք դոնդից վոնդվելով՝ պատուհանից ներս չմտնեն:

Չտումը մի շատ կարեոր ձեռնարկում է, և զտման հարցերին բանվորները մեծ հետաքրքրությամբ են վերաբերում: Աւշադրությունն զարձրեք այն փաստի վրա, վոր վնասակ ել գործարաններում քննության են առնվում բյուրոկրատիզմի գեմ պայքարելու վերաբերյալ կենտկոմի թեզիները, բանվորների մեծամասնությունը հանդիս է գալիս հատկապես խորհրդագին ապարատի գտման հարցի առթիվ: Այս նշանակում է, վոր խորհրդակին ապարատի գտումը հսկայական ուշադրություն է բնենու իր վրա: Սակայն այս հանգա-

մանքը մեզ կրկնակի չափով պարտավորեցնում է գործն այնպես կազմակերպել վորպեսզի զտումը հապճեպ կերպով չկատարվի, վորպեսզի իզուր տեղն աղմուկ չբարձրանա, ինչպես այդ տեղի ունեցավ այն նահանգում, վորտեղ 1500 հոգի զտեցին միայն նրա համար, վորպեսզի 2 որից հետո ցավելով կամ ծաղրանքով ասեն, թե ամեն ինչ առաջվա պես ե ընթանում, միայն իվան թվանիչը և 5 տնից տեղափոխվել և ծառայում և և 3 տանը:

Ա.Ռ.Ս.ԶՔԱ.ՇՄՍ.Ն ՄԱՍԻՒ

Այս հարցի հետ, վերջապես, կապված է և այն, թե մենք ինչ չափով կարող ենք փոխարինել այդ գտվածներին: Մեր շտատային բնությունը դատարկություն չի հանդուրժում. այս հայտնի յէ, վորտեղ շտատային տեղ կա, աշխատում են խօսուն մեկին տեղատային վալորել, վորպեսզի չգրկվեն այդ շտատային տեղից:

Եթե այստեղ հարցն այնպես ե զրված, վորպեսզի մեղանում առաջքաշումն ընթանա զտման անմիջական հետքերով, նրա ընթացքի համեմատ: Իհարկե, պարագաղիր չե զտումն այնքան հետաձգել մինչև վոր մենք առաջքաշման համար մարզիկ պատրաստենք: Մենք առաջքաշման համար առաջիկ պատրաստենք: Մենք ստիպված ենք զտելու առնվազն 100 հազար մարդ, և մենք հազիվ թե կարողանանք այս տարվա ընթացքում նույնքան բանվորներ առաջքաշել այդ տեղերը գրավելու համար: Սակայն անհրաժեշ է այդ յերկու ձեռնարկումները կապել միմյանց նետ, վորպեսզի գտումը անդամ է թեզիները մասնամասն մատնանշված են պահպահման բոլոր եւական թերությունները, սակայն,

թերես, իս այդ թերություններն ավելի հասկանալի ձևով բնորոշած լինեմ, ինթե կարգամ մի առաջքաշ-ված գուղացու—Բլոխինի պարզ լեզով արտասանած ճառը, վորով նա համառոտ կերպով պատմել ե իր առաջքաշման ամրող պատմությունը:

«Ընկերներ, իս ուզում եմ պատմել մոտավորապես, թե իս ինչպես առաջքաշվեցի, ինչպես եմ մինչև այժմ ծառակում, և այս լերեք տարգա ընթացքում ինչ ոգուտ կամ թաս եմ տվել:

Սկզբում իս զյուղվարհի նախագահ ելի, լերը ինձ առաջքաշեցին և նշանակեցին այս պաշտոնին. իս դիմեցի նահանգական կուսակցական կոմիտեին, վորեց հետո ինձ սկսեցին առաջքաշել, վորպես Սարա-սովի գյուղմիության գործառնական բաժնի վարիչ:

Ես ուղերժվեցի հաշվառման-բաշխման բաժինը (Սարատ. նահանգկոմը) և հայտնեցի, վոր իս բացի արջի ծառայությունից, ուրիշ վոչինչ չեմ կարող անել. իս մասի վարժված զյուղացի ինձ, թեև ձրիաբար սովորել եմ կոտպերատիվ կուրսերում, սակայն շատ քիչ բան եմ ձեռք բերել: Այդ ժամանակ կուսակցության նահանգկոմն ինձ նշանակեց Սարգուղմիության հրա-հանգիչ: Բայց իս բառի բուն նշանակությամբ 4 ա-միս նստեցի, բոլորովին վոչինչ չանելով. իս սկսեցի ասել վարիչին. ընկեր, ախր պետք ե վորեն գործ ա-նել, չե վոր իս առաջքաշված մարդ եմ: Սրանից հե-տո կուսակցության նահանգկոմը վճռական միջոցներ ձեռք առավ,—Սարգուղմիությունը շարժվեց և ստեղ-ծեց գոյություն չունեցող լիկիդացիոն հանձնաժողովի և ինձ ել նշանակեց այդ հանձնաժողովի անդամ: (Ծի-ծաղ): Յես մեկնեցի Մեծ Կարարուլակ՝ քննելու աը-

նախագործ-կոշկակարների հետ ծագած վիճելի գոր-ծը. այնտեղ յես պարզեցի, վոր այդ տնայնագործնե-րին Սարգուղմիությունը խարել ե. ստուգումից հե-տո իմ տվյալներն անհերքերի կերպով հաստատվեցին: Դրանից հետո կուսակցության նահանգկոմն իմ թեկ-նածությունն ասածարկեց «Սեմենովուսայուղում»¹ ծա-ռայելու համար: Յեվ հենց առաջին անգամից, հենց վոր յես աշնաեղ գնացի, յես ստիպված յեղա թիւրի-մացություններ բաց անելու. այդ բանն ինձ հաջող-վեց, վորովհետեւ յես ինքս գյուղացի յեմ և լավ ծանոթ եմ այդ գործին: Պարզվեց, վոր Սերգոբինկա գյուղի գյուղացիներն ստացել են վարսակի զտած սերմ. յես ստուգեցի այս սերմերի ծլունակությունը և դուրս յե-կավ, վոր նրանք ծլունակ չեն. յես ստիպված յեղա գնալ ելիվատոր և խնդրել լավ սերմացու, քանի վոր գյուղացիք նախկին սերմացուից հրաժարվել և մնա-ցել ելին առայց ցանքի: Այս բոլորն առաջ եր յեկել նրանից, վոր նահանգ. հողվարչության մասնագետը վատ եր հետեւել գործին:

Այդ ժամանակ մեր ապարատում կատարվեց 20 օ/օ կրծատում, և ինձ ել կրծատեցին: Յես դիմեցի Սա-րատովի նահ. Հող. Վարչության վարիչին. այդ ժա-մանակ ինձ նշանակեցին փայտապատրաստման բաժ-նի վարիչի տեղակալ: Յես կասկածեցի, թե կարող եմ նի վարիչի տեղակալ: Յես կասկածեցի, թե կարող եմ այդ գործը կատարել, սակայն ինձ հայտնեցին, վոր այդ գործը հասարակ գործ ե, իմ վրա դրվում և զե-կավար գերը. մի խոսքով, յես գնացի այդ բաժինը, այնտեղ եր բաժնի վարիչը, վորն ինձ ասաց, թե յես վոչ թե պետք ե տեղակալ լինեմ, այլ վարիչ: Յես նը-

¹ Սերմարուժական միություն:

բան ասացի, վոր ալդ պաշտոնն ինձ համար մեծ ե, վոր յես նեղ մասնագիտության տեր մարդ եմ, սակայն նա ինձ պատասխանեց, վոր յես վոչ թե պետական ֆոնդի անտառների բաժնի վարիչ եմ, այլ տեղական նշանակություն ունեցող անտառների։ Այս պաշտոնում յես 2 թե 3 ամիս նստեցի առանց գործ կատարելու. սրանից հետո յես դարձալ հարց բարձրացրի, սակայն վարիչն ինձ հայտնեց, վոր յնթե դու մնաս, յես քո բանը կահաջողեցնեմ։ Այդպես յես քաշ տվի մինչև գարուն. գարնանը նոր վարիչ նշանակվեց. յես նրան հայտնեցի, վոր յեթե գործ լինի, կծառայեմ, իսկ յեթե չլինի՝ կհեռանամ։ Ինձ դարձալ ասացին, վոր ինձ կապահովեն 100 % ոպկ. իսկ ժամանակն անցնում եր, արդեն հասել եր ամառվա կեսը, իսկ տանը մնացել եր տնտեսությունս ու ընտանիքս։

Հետո յես գիմեցի Յերկը. գործկոմ, ինդրեցի արագացնել իմ հարցը. սակայն ինձ պատասխանեցին, վոր յերբ քաղաքական մոնինուը պահանջում ե, վոր անտառային տնտեսության մեջ զբուղացի լինի, ապա մենք պետք ե քեզ պահենք, սակայն այնուամենակիվ իմ պաշտոնը վոչ նախահաշվով ե վոչ ել շտատներով չեր նախատեսվում ե ձևակերպված չեր, և յես շարունակ պաշտոնական անձ չեմի։

Այսուհետեւ յես հողվարչության բաժնի վարիչի առաջ հարցն այսպես զրի. «Բնկերներ, դուք ասացեք՝ յես գնամ տուն, թե դառնամ պաշտոնական անձ»։ Բացի զրանից յս հարց զրի մասնագետների առաջ, վոր նրանց աշխատանքը վատ ե ընթանում, վոր ալդ աշխատանքն իր պրակտիկ գործունելության մեջ կտրվում ե ամենահրատապ հարցերից. նրանք պատաս-

խանում են, վոր դու ծառայում ես տեղական նշանակություն ունեցող անտառների բաժնում, իսկ մենք պետական նշանակություն ունեցող անտառներում, իսկ դու գործին ծանոթ չես»։

Ի՞նչ ե այս որինակի իմաստը։ Այս որինակի իմաստը մի գյուղացու տիսուր արկածները չեն, այլ ալդ արկածի դասակարգային բնուկթը։

Ամբողջ մեքենան շատ հաճախ սվիններով ե զիմավորում այնպիսի առաջքաշվածի, վորը վոչ թե մի հասարակ առաջքաշված ե անունով, այլ մի մարդ ե, վոր մասսաներից ինչ-վոր թարմություն ե բերել, թեկուզ նրանով, վոր պատրաստ ե պարագանելու բյուրոկտափակմի դեմ, և վոչ թե կուր աչքերով գիտելու այն ամենը, ինչ վոր կատարվում ե իր շուրջը։ Յեթե մենք վերցնենք մեր կենտրոնական ապարատում աշխատող առաջքաշվածների թիվը ու վիճակը, ապա զբությունն այսակեղ ես պիտք ե բավական անմիտիթար համարենք։ Յեթե կենտրոնական ապարատում առաջքաշում տեղի յել ունեցել ե, ապա մենք այսակեղ ես որինակներով կարող ենք տեսնել, թե ինչպես բյուրոկտափական ապարատային մեքենան ալդ առաջքաշվածներին դուրս ե քանի մեր խորհրդակին ապարատից։ Վոմանք ասում են, թե ստորին հասարակական աշխատանքներից միանգամից ապարատ ընկած բանվորին չես կարող աշխատանքի դնել մեր հիմնարկներում։ Բայց չի՞վոր ճիշտ չե ալդ տեսակետը։ Այդ միևնույն ժամանակ մեղանում նստած են տասնակ «մասնագետներ», վորոնց մի զգալի մասը, մասնավորապիս Սոսկվալի մեր հիմնարկներում, ինն նյութ ե, վորոնք, որինակլաք ստան՝ մասին լսել են այն, ինչ վոր 20 տարի առաջ

գոյություն ուներ ցարական Ռուսաստանում և այժմ
ել տառ առ տառ նույնը կրկնում են, իսկ նրանց հե-
տեղ ել այդ մաքերը կրկնում են կոմունիսաները, վոր-
պես սոցիալիզմի վերջին խոսք:

Միթե մեզանում կացությունն այնպես ե, վոր
մենք կուսակցության ամբողջ ուժերով չենք կարող
այնպես անել, վոր յերբ մենք զտում ենք կատարում,
առնվազն տասնյակ հազար, գուցե և հարյուր հազար
մարդ, բացարձակապես անպետք համարված մարդ
զտում ենք, ապա կարողանանք նրանց տեղ, նրանց
փոխարինելու համար 10—15, գուցե և 20 հազար մարդ
ստորին շերտերից առաջքաշել: Այստեղ նախապես ճիշտ
թիվ գորոշել չի կարելի, սակայն անհրաժեշտ է, վոր մենք
կենտկոմի թեղիներում մատնանշված մեթոդներով
աշխատենք նոր ուժեր առաջքաշել մեր ապարատի
համար:

Ահա թե ինչ կապակցությամբ ե դրվում մեզա-
նում առաջքաշման հարցը և ինչպես ե կապվում կա-
տարման ստուգության ընդհանուր հարցի հետ: Հար-
ցը վերաբերում է մեր ապարատի կառուցվածքին, վո-
րը պետք ե հնարավորություն տա վորոշել, թե ովք
ինչի համար ե պատասխանառու: Մյուս կողմից մենք
դնում ենք նաև մարդկանց վերաբերյալ հարցը, վորը
բաժանվում է յերեք հարցերի: — 1) կատարման ստու-
գության հետևանքով պետք ե ազատվել «շատեմպելող
կոմունիստներից», իսկ մյուսներն ել պետք ե սովո-
րեն, սովորեն և սովորեն, այլապես, առանց զրան,
դասակարգավիճ պատքարի պայմաններում թշնամին
մեզ կհարփածի: 2) պետք ե պետապարատը դոել այն
տարրերից, վորոնք չեն ուզում և չեն կարող կա-

տարել մեր որենքները: 3) անհրաժեշտ ե այդ տար-
րերին փոխարինել սառրին խավերից լեկող բանվորա-
կան արյան նոր հոսանքով:

ԱՊԱՐԵՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՄԵԶԱՆՈՒՄ
ՅԵՎ. ԿՈ.ՊԻՏՈՎԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԱԽՄ

Ընկերներ, իմ զեկուցման հիմնական մասն ար-
դին արված ե, յես շոշափեցի թեղիների հիմնական
կետերը. թույլ ավելք միայն ամփոփել իմ ասածները
հատեկալ ձեռվ: Շատ հաճախ մեզանում ապարատի վե-
րակառուցման խնդիրն այն պարզ մտքով են հասկա-
նում, թե պետք ե այդ ապարատը համապատասխա-
նեցնել արդունաբերության վերակառուցման պա-
հանջներին. մինչդեռ կենտկոմի թեղիներից միան-
գամայն բացահայտ ե, վոր այդ ձեռակերպումը անբա-
վարար ե. ապարատը տնտեսության վերակառուցման
պահանջներին համապատասխանեցնելու հարցը զրված
ե ամեն մի կապիտալիստական յերկրում: Հյուս. Ամեր.
Միացյալ Նահանգներում նույնիսկ հատուկ ինստի-
տուտ կա (Վաշինգտոնում), վորն ուսումնասիրում ե
պետական ապարատը և մշակում ե ամերիկական պե-
տական ապարատի վերակառուցման պլանը: Նույն
Միացյալ Նահանգներում հիմնարկների աշխատանքի
գործառնական, ֆինանսական և կտղմակերպչական
պլանավորումը շաղկապելու նպատակով նախազահին
կից հիմնված ե հատուկ բյուջետավիճակությունը, և մի
հատուկ պաշտոնյաց յե աշխատում, վոր կոչվում ե
գլխավոր կոորդինատոր: Ամերիկայում ռացիոնալաց-
ման կենտրոնական բյուրությունի վրա պարտականություն

և դրված վերացնելու պետական ապարատի աշխատանքների զուգահեռականությունը (պարագելիզմը), վոր առաջ և գալիս ապարատի այժմյան կառուցվածքից: Այսպիսով, կապիտալիստական լերկրներում և պետական ապարատը ծավալվող տնտեսության պահանջներին համապատասխանեցնելու հարցը դրված է թե տեսականապես և թե գործնականապես: Դեռ ավելին, այստեղ, կապիտալիստական լերկրներում գրվում են տնտեսության ամբողջ սիստեմի ռացիոնալացման և վերադիր ու ավելորդ ծախքերը վոչչացնելու կամ գեթ վճռականապես պակասեցնելու հարցերը: Այդպիսի հարց համենայն դեպում մշակում եր Հ.Ա.Մ.Ն. այժմյան նախագահ Հովհերի հանձնաժողովը. և լեթե Հովհերի աշխատանքներից և փոչ ել Վաշինգտոնի ինստիտուտի աշխատանքներից մինչև այժմ դեռ վոչինչ չի դուրս լեկել (Վաշինգտոնի ինստիտուտի նախագծերից և փոչ մեկը կանքում չի կիրառված), առա այդ հանգամանքը լերենք չի նվազեցնում այն փաստի սկզբունքավին նշանակությունը, վոր բուրժուազիան ևս հանձինս իր առաջարկոր տարբերի դուռը և վարչական ապարատի ռացիոնալացման հարցերը:

Զի կարելի ասել, վոր հենց միայն մենք ենք դնում ապարատը տնտեսական նոր խնդիրներին համապատասխանեցնելու հարցը, վոր այդ լերենութը միայն մեզ և հատուել: Այսեղ մեր յել ուրիշ լերկրների միջել տարբերությունը հենց այն է, վոր մենք յել նրանք հարցը դասակարգայնորեն տարբեր ձեմով ենք դնում: Այնպես, ինչպես աշխատանքի արտադրողականության բարձրացման հարցն ընդհանրապես տարբեր բովանդակություն ու բնություն ունի կապիտալիստական

լերկրներում և խորհրդային յերկրում, վորտեղ այդ հարցի լուծումը կապված է տնտեսության սոցիալիստական հատկանության ծավալման, նրա ընդարձակման հետ, այնպես ել ապարատի բարելավման և բյուրոկրատիզմի դեմ պարբերությունը վերաբերյալ մեր աշխատանքը տարբերվում է այդ նպատակով կապիտալիստական լերկրներում կատարվող աշխատանքից: Մեզ նարկավոր է այնպիսն բարելավել պետական ապարատը, վոր նա մարտնչակ դառնա, վոր նա կարողանա կովել կուլակի ու նեպմանի դեմ, ահա քեզ պետական ապարատի այնպիսի բարելավում, վորպեսզի այդ ապատան ավելի լինի կոլեկտիվի զացիացի գծով աշխատանք կատարելու, վորպեսզի այդ ապարատն ել ավելի ընդունակ լինի անմիջականութեն, արագ կերպով բարելավելու բանվորի ու զուղացու պահանջներն ու կարիքները: Հետևապես, մեղացու պահանջներն ու կարիքները: Վոր թե լոկ ողակների զանում խոսքը վերաբերում է փոչ թե լոկ ողակների քանակին, նրանց կրճատմանը, պակասեցնելուն կամ ավելացնելուն, — վոր մեղանում զրված և ապարատ ավելացնելուն, մեղանում զրված է ապարատը ապակարգային դարձնելու հարցը: Խոսքը նրան և վերաբերում, վորպեսզի այժմ, լերը մենք շատ լուրջ դարաբերում, վորպեսզի այժմ, լերը մենք շատ լուրջ դարաբերում, վորպեսզի այժմ, լերը մենք մղում, մեր ապարատը սակարգային պարբար ենք մղում, մեր ապարատը հարմարեցնենք, համապատասխանեցնենք այն պահանջներին, վորոնք դաստկարգային կոփլեկը հետեւ հանջներին, վորոնք դաստկարգային կոփլեկը առաջադրվում են բանվոր դաստկարգին:

Մեր հակառակորդները — համաշխարհային բուրժուազիան, կուլակներն ու նեպմանները և բուրժուական ինտելիգենցիաները մեր սոցիալիստական շնորհարաբերությունը կատարվի գիմագրություն են ցուց տալիս:

Այդ դիմադրությունը հաղբահանելու պլոցեսում կուսակցությունն ու բանվոր գասակարգը կուլակի գեմ պարագարում, ճակատում են ամենից առաջ հացամթերձան ճակատում, վորտեղ կուլակը փորձում և ոդագործել խորհրդալին իշխանության գեմ իր կուտակած միջոցները. կուսակցությունը և բանվոր գասակարգը կուրում, խորտակում են բուրժուական ինտելիգենցիալի այն տարրերի դիմադրությունը, վորոնց համար հաջող սոցիալիստական շինարարությունը մի վերջին ապացուցե, վոր իզուր են ու անհիմ նրանց այն հուկանքը, թե նեպը հանգիստ ու աննկատելի կերպով խորհրդալին իշխանությունը կհասցնի բուրժուական ալյասիոնան նավահանգիստը, թե նոր տնտեսական քաղաքականության հետեանքով սոցիալիստական գործարանները խաղաղ կերպով կլերածվեն բուրժուական-կանոնադիտալիստական հասարակակարգի, կուսակցությունն ու բանվոր գասակարգը նպատակ են դնում ստեղծել սեփական տեխնիկական ինտելիգենցիա, վորովես հակակիռ մեր աշխարհի հետ հաշտվել չկամեցող արդ իսկ պատճառով անհետացող, մեռնող բուրժուական ինտելիգենցիայի. կուսակցությունն ու բանվոր գասակարգը հօնմ, վարում են կապիտալիստին արտադրական գրության ու առևտքի գիրքերից. կուսակցությունը և բանվոր գասակարգը բնեադառում են իրենց սեփական բերությունները, այդ թերությունների գեմ պատքարելու համար վոտքի հանելով բանվոր գասակարգին և աշխատավոր գուղացիությանը:

Ահա այսուոր ինդիբները, կամ վերջին մի էիրկու տարվա ընթացքում նոր ձևով գրվող այս ինդիբները նոր պահանջներ են առաջադրում մեր պետական

ապարատին, նրանից նոր ձեվի աշխատանք են պահանջում. Մենք արդեն սկսել ենք հնգամյա պլանի խընդիրները լուծել ծավալվող գասակարգային պարագարի պայմաններում, — այս և ելականը: Վորպեսզի կասեցնենք, ինչ մղենք կուլակի յեվ վիճաւարի (Շախտի) հարձակումը, վորպեսզի դուրս մղենք խուռ անհատական կուլակային տեսեսությունը յեվ փոխարինենք խուռ կոլեկտիվ տեսեսությամբ, վորպեսզի ինտելիգենտ-վիճաւարին փոխարինենք պրոլետարական ինտելիգենտով, պետք եպետական կառավարչության ամբողջ ապարատը վերակառուցել, պետք ե փոխել նրա այն կառուցվածքը, վորգոյություն ունեն նախորդ տարիներում, յերբ գասակարգային պայքան այժմիան համեմատությամբ բավականական մեղմացել զգալի չափով բուլացել եր: Ահա թե ինչու բայլեւիկները պետական ապարատի վերակառուցման հարցը դնում են, վոչ միայն վորպես նրա եժանացման, ապակենունացման, ձգձումները վոչնչացնելու հարց, այլ նայել վորպես այդ ապարատ մեր առաջ կանգնած դասակարգային խնդիրներին համապատասխանեցնելու հարց, վորպեսզի այդ պետական ապարատն ապահովի պրոլետարական ու կիսապրոլետարական մասսաների ակտիվությունն ամենալայն չափերով ոգտագործելու հնարավորությունը, վորպեսզի այդ ապարատն ապահովի պրոլետարիատի դեկավարությունը զյուդոցիության նկատմամբ, նպաստի այդ դեկավարությանը, վորպեսզի այդ ապարատն ոգնի մեզ չխավոր ու միջակ զյուդոցիությանը համախմբելու կուլակների դեմ, վորպեսզի դացիությանը համախմբելու հուլակների դեմ մանր այդ ապարատը հնարավորություն տա դիմադրելու մանր գիսներում դրվագ և մեր պետապարատի վոչ թե ձեվական գիսներում դրվագ և մեր պետապարատի վոչ թե ձեվական

վերակառուցման հարցը, վոչ միայն ողակների թվի, չի նովիճիկների թվի յեվ նման այլ հարցեր, այլ այդ ապարատի բուն դասակարգային բնույթի հարցը, կատարման ստուգության հարցը, երա անձնական կազմի հարցը, այդ ապարատը դասակարգայնուեն-քենամի տարրերից մաքրելու հարցը, բոլոր մասսայական կազմակերպությունների աշխատանքն աշխուժացնելու հարցը, բոլոր կազմակերպությունների աշխատանքի նկատմամբ ցածից վերահսկողությունն ուժեղացնելու հարցը, ինքնառնադատությունը ծավալելու յեվ ներկառակցական դեմոկրատիայի հարցը:

Ահա այս կապակցությամբ ել մեզանում դրվեց կատարման ստուգության, համապատասխան կազմակերպչական կառուցվածքի, մարդկանց ընտրանքի հարցը—այն ձեռվ և այն բովանդակությամբ, ինչպես այդ ասված ել թեզիսներում և այսոր իմ զերուցման մեջ:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՆ ԶԵՎԵՐԸ ԴԵՌ Ա.ՊՐՈԽՄ ԵՆ, ՆՐԱՆՔ ՄԵԶ ԱՆՇԱԲԴՈՒԹՅԱՆ ԵՆ ՄՍ.ՏՆՌԻՄ

Այս յեղբափակման դիտողություններից հետո թույլ տվեք անցնել պետական ապարատի արձատական վերակառուցման հարցերին, վորոնք կանգնած են մեր առաջ, վորը մենք պետք ել լուծենք. և վորը մենք կկարողանանք հաջողությամբ լուծել, յեթե մենք այդ աշխատանքը հիմնենք կատարման ստուգության այդ աշխատանքը հիմնենք կատարման ստուգության ստուգության անկանությունից: Մենք այդ նույն սպառակին հասնում ենք յերկու ճանապարհով: Առաջինը—արտաքին առերի մենաշնորհն ե, հետո արդեն մենք մեր ձեռքում

նակարգ խնդիր, առաջադրել ե կատարման ստուգության և ապարատն այդ հիմունքներով սոցիալիստական շինարարության խնդիրներին համապատասխանցնելու հարցերը և ընկ. Սերգովի այդ հիմնական տեսակետը ԲԳՏ և ԿՎՀ ամբողջ աշխատանքի ընթացքում փորձով հաստատվել է 100% -ով, քանի վոր ապարատի վերակառուցման խսկական գործնական հարցերն ամենից առաջ առաջադրվում են կատարման ստուգության հողի վրա:

Ի՞արկե, այստեղ պետք ե նկատի ունենալ այն հանգամանքը, վոր ապարատն այդ տեսակետից չի կարող մեզ կատարի դիմադրություն ցուցը չտալ: Յես կրերեմ ապարատի այդ կատարի դիմադրության յերկու որինակ. մի զեպքում ապարատի զլուխ են կանգնած Առեւտը Ժողկոմատի աշխատակիցները, իսկ մյուս զեպքում՝ Ֆինժողկոմատի աշխատակիցները. այս որինակներից պարզ յերկում ե, վոր այս հարցերը պետք ել լուծել ամբողջ կուսակցության միատեղ ուժերով, չվատահանալով այս տեսակետից և վոչ մի առանձին ապարատի:

Առաջին հարցը, վորից բացահայտ կերպով կարող ենք տեսնել ապարատի դիմադրության ուժը, իսկ մյուս կողմից՝ այն ուղղությունը, վորով մենք պետք ել ընթանանք, մասնային տարիքների հարցն ե: Դուք գիտեք, վոր կապիտալիստական հասարակության մեջ մաքսալին տարիքի նպատակն ե հովանագործությունից: Մենք այդ նույն սպառակին հասնում ենք յերկու ճանապարհով: Առաջինը—արտաքին առերի մենաշնորհն ե, հետո արդեն մենք մեր ձեռքում

ունենք մաքսալին տարիքները։ Վորը վճռական նշանակություն ունի, իհարկե մենաշնորհը, ապա ուրեմն, պետք ե համաձայնվել այն՝ սկզբունքորեն կարծես անվիճելի տեսակետի հետ, թե դրա համեմատ ել մաքսալին տարիքների ամբողջ սիստեմին ինրկրորդական դեր, և վերապահվում, և մեզ համար բոլորովին պարտադիր չե ամբողջությամբ կիրառել տարիքալին այն ամբողջ ծխակատարությունը, վորը գոյություն ուներ ցարական Ռուսաստանում, կամ վորը գոյություն ունի կապիտալիստական ինրկրներում։ Իսկ մեզանում մեր մաքսալին ամբողջ սիստեմ ամբողջապես հնի ընդորինակումն ե, մեզանում նույնիսկ առաջավոր կապիտալիստական ինրկրների փորձը չի ոգտագործվում, այլ կիրառվում են հին ցարական Ռուսաստանի որինակներն ու ձեռքը։ Մեր մաքսալին տարիքն աներեակալի չափերով բարդ ե։

Իսկ ինը հեց ինքը, մաքսալին գործի զելավարը դուռմ ե այդ գործի վերակազմության հարցը, չտեսնված բողոք ե բարձրանում։ Շատերն այստեղ տեսնում են համարյա մի փորձ խախտելու արտաքին առևտրի քաղաքականության հիմքերը, վոտնձգություն արտաքին առևտրի մենաշնորհի գեմ, սպառնալիք ԽՍՀՄ մանեվրալին ունակությունների գեմ։ Այս հանգամանքը ցուց ե տալիս, թե ամբողջ կուսակցությունն ինչպիսի ուշագրությամբ և ինչ հաստատակամությամբ պետք ե քննի ու վճռի ապարատի վերակառուցման այդ հիմնական հարցերը, կտրելով, դեն շպրտելով այն, ինչ վոր մեզանում ավելորդ ե, ինչ վոր մենք կրկնում ենք չին ցարական Ռուսաստանի որինակով, առանց գործի ելությունը հասկանալու։

Հնի այդ մնացորդները, բացարձակապես հնացածն ու անպետքացածը փշրելու, լիկվիդացիալի լինթարկելու համար անհրաժեշտ ե ամենավճռական միջոցներ ձնոք առնել։ Մաքսալին ապարատի որինակն այս գեղքում չափազանց բնորոշ ե, մեր մաքսալին տարիքը հազարավոր զանազան հոդվածներ ունի, իհարկե, մաքսալին տարիքի բարզությունն իր հերթին համապատասխան մաքսալին ձեսկանություններ ե պահանջում։ Մաքսատունը պետք ե իր գործառնությունների ժամանակ պահեստներ ունենա (աչդպիսի պահեստներ կան նույնիսկ Մոսկվայում)։ մեր արտասահմանյան մարմինները պետք ե համապատասխան պահանջների բավարարեն—հատուկ փաստաթղթերով պետք ե տան այն բոլոր նշանները, վորոնք նախատեսված են և հաշվի չեն առնվում մաքսալին տարիքներով։ Երբ արտասահմանյան ֆիրմաների առևտրական փաստաթղթերում այդպիսի նշաններ չեն լինում, նրանցից հատուկ տեղեկանքներ են պահանջվում։ Մաքսալին տարիքների ելությունն ամենից լավ էրեկում և մաքսալին կանոնագրքի՝ առանց վորեն ընտրության վերցրած հետեւալ հոդվածներից։—

Հոդ. 176. բուլը.

1. Փաթաթելու թուղթ . . . վորը պարունակում ե 50% և ավելի պակաս ցելլուլոզա 100 կգ 8 ռ. 50 կ.

2. Տպագրության թուղթ (նաև լրագրի) և առեն տեսակ առանձնապես հիշված, վորը պարունակում ե 50% և ավելի փայտամասս, առանց հ ն ո տ ո ւ խառնուրդի 100 կգ 12 ռ. 50 կ.

3. Տպագրական և տեսակ այլ
թուղթ, վոր առանձնապես հիշված է, և պա-
րունակում է 30% և ավելի, 60% ից վոչ
պակաս փայտամասսա, առանց հնոտու
խառնուրդի 100 կգ 18 ռ. —

4. Ամեն տեսակ, վորոնց թվում տպա-
գրական թուղթ, բացի հատկապես թված-
ներից, մասսայաբար ներկված, բացի այս
հոդվածի 5—10 կետերում հիշվածնե-
րից 100 կգ 25 ռ. —

5. . . . 70 մմ լայնությամբ, գլանակ-
ների, հեռագրական և այլն, բացի այս հոդ.
9 կետում հիշվածներից, վոր պարունակում
է 30% և ավելի փայտամասսա . 100 կգ 21 ռ. —

6. . . . (մանրամասնություն-
ներ) 100 կգ 28 ռ. —

7. . . . (մանրամասնությ.) . 100 կգ 50 ռ. —

8. . . . (ջրագծերով) . . . 100 կգ 64 ռ. —

9. Քաշը 16 կգ և պակաս 1 ք. մետ-
րում լայնությունը 30 մմ և պակաս, թե-
կուղ ներկված թղթերով, տարրեր լեզվե-
րով 100 կգ 80 ռ. —

10. Քաշը 16 կգ և պակաս 1 ք. մետ-
րում, բացի այս հոդվածի 9 կետում հիշա-
տակածից, թեկուղ ներկված . . 100 կգ. 125 ռ. —

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.—Այս հոդվածի 2 կետում
հիշված թուղթը կարող է փայտամասսալի մատնա-
նչված քանակությունից միայն 5% ավելի պարու-
նակել.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.—Այս հոդ. 2, 3 և 4 կե-

տերի համաձայն անց և կացվում 45—53 սմ և ա-
վելի չափի թուղթ թերթերով, իսկ այդ չափից պա-
կաս թուղթն անց և կացվում 177 հոդ. 2 կետի
կարգով:

Փորձեցնք այս հոդվածի հիման վրա վորոշել, թե
մուծվող թղթի համար վորքան մաքս պետք են վճա-
րել. Բանն այնտեղ է համառում (մեզ այդ պատճել և
այդ գործի զեկավարը), վոր Մոսկվայի մաքսատանը
գտնվող լաբորատորիան վորոշում է, որինակ՝ վոր
տվյալ թղթի մեջ 60% ցելլուլոզա կա. ԺՃԽ այդ
% ին չի համաձայնվում, և թուղթը հանձնում են
ԺՃԽ մի ուրիշ լաբորատորիա զննելու համար, և
ցերք այդ լաբորատորիան վորոշում և թղթի մեջ պա-
րունակող ցելլուլոզայի տոկոսը, որան չի համաձայ-
նում մաքսալին ատարատը, և ահա վորոշում են
թուղթն ուղարկել Ֆինլանդիա, վորպեսզի, իրոք չե-
զոք լերկիր, վորոշի, թե թղթի մեջ քանի տոկոս
ցելլուլոզա կա:

Մենք մեզ ավելորդ ներմուծումից բառացի կեր-
պով այսպես ենք պաշտպանում, վոր վոչ մի փունտ
թուղթ չի կարելի ներմուծել առանց կառավարության
և կուսակցության թուլովության. Ինչ թագցնենք
մենք այստեղ մեզանից. վերջերս, լեռը հարց եր զրված
մեկ միլիոն ոուրլու թուղթ ներմուծելու մասին, այդ
հարցը քննվում եր կառավարական և կուսակցական
բարձր մարմիններում. Կյականն այն ե, վոր կառա-
վարությունը վճռում ե, թե կարելի լի, արդյոք, մեկ մի-
լիոն ոուրլու թուղթ ներմուծելի իսկ. ձեվն այնպես ե,
վոր կարծես թե մեզ պետք ե մեր թղթի արդյունաբե-
րությունը պաշտպանել վորոշ տեսակ թղթի ներմու-

ծումից իսկ զբա համար մեղ պետք են «մասնագետների» կադրեր, այլապես ինչպես կարելի է զլուխ հանել յեթև այստեղ նստեցնենք թեկուզ ամենաառաջավոր բանվորին, նա վոշինչ չի հասկանա:

Չուրար. Այդ սովորեցնում են ԲՈՒՀ երում:

Յակովիեվ.—Ահա, ընկ. Չուրարն ասում ե, թե բարձրագույն դպրոցներում ամեն դատարկ բան սովորեցնում են, սովորեցնում են նաև այն, թե ինչպես պետք ե հասկանալ այն անմիտ կանոնները, վոր մենք ինքներս ենք դրել վորոնք շատ ոգտակար ենին ցարական Ռուսաստանում, վորտեղ չկար արտաքին առերի մենաշնորհ, չկար նաև պրոլետարիատ, վորպես պետությունը զեկավարող ուժ, իսկ մեզանում այդ անմիտ բանը գրված ե, վորովհետեւ մարդիկ դեռ հավատարիմ են անցյալի տրագիցիաներին:

Յեթև հաշվենք, թե մենք ինչքան վնաս ենք կրում ապրանքները պահեսաներում պահելուց, յեթև հաշվենք զբա հետևանքով արտասահմանում ունեցած մեր կորուստները, մի վայրից մի այլ վայր տեղափոխելուց ստացած մեր վնասը, յեթև հաշվենք, թե ինչ ե նստում մեղ մաքսալին ապարատը, ապա կլոր թվով կստացվի մոտ 10 միլիոն ռուբլու մի գումար: Այսպիս սով, մենք ահագին գումարներ ենք ծախսում, մինչդեռ ավելի լավ ձեվով կազմակերպելու դեպքում մենք կարող ենք այդ ծախսերը հասցնել մի քանի հարյուր հազար ռուբլու: Նկատի ունենալով, վոր այժմյան առևտրական շրջանառության $95^0/0$ -ը պետական-կոռպերատիվ կազմակերպությունների շրջանառություններ, մաքսալին մարմինները ԲԴՏ վերստուգությունից հետո համաձայնեցին, վորպեսով բեռների $85^0/0$ -ը նայվի

վագոններում, $75^0/0$ -ը բաց թողնովի նախքան մաքսը վճարելը: Սակայն այդ չափազանց լիրկուտ քայլ ե. պետք ե վճռականապես ձեռք քաշել մաքսալին զործը բուրժուական յեղանակներով վարելուց: Ի՞նչ պետք ե անել այդ նպատակով: Պետք ե վերացնել ամեն մի ապրանքի մաքսն առանձին հաշվելու բարդ սիստեմը: Միևնույն չե, թե ինչ թուղթ ե ներմուծված: Յեթև կենտկոմը և կառավարությունը վորոշել են թուղթ ներմուծել և վորոշ գումարի թուղթ են ստացել, ապա, ուրեմն, ավելի պարզ և նպատակահարմար ե վորոշել վոր յուրաքանչյուր 10 հազար ռուբլուն պետք ե վճարել, որինակ $10^0/0$, և այդ ժամանակ ամեն մի հաշվետար կարողանա այդ $10^0/0$ -ը հաշվել թե հազար ռուբլուց և թե հինգ հազար ռուբլուց և այլն: Այդ պարզ ռեֆորմի շնորհիվ կվերանան այն խառն ու անհասկանալի հաշվերն ու նորմաները, վորոնք դեռ մեզանում գոյություն ունեն: Այդ գեպքում, յերբ Առեւտրի ժողկոմատը լիցենզիա տալիս վորոշում ե, թե տվյալ ապրանքն ապրանքների վոր կատեգորիալին ե պատկանում, արդ դեն ամեն մի տրեստ կարող կլինի հաշվել մաքսի գումարը և հաշվել ստանալուց հետո մաքսը վճարել այնպիս, ինչպես վճարում են բոլոր հարկերը: Բայց զրանից, կարելի կլինի ամրող ապրանքը $100^0/0$ -ով ստանալ արտասահմանից և ուղարկել ստացողի հասցեյով: Այն ժամանակ, ինարկե, վերջ կարվի հետեւալ անհեթեթությանը: «Բերլինից Զուսավի ուղարկված № 610 ապրանքների զննությունը մաքսատան կողմից ուշացել ե, վորովհետեւ մաքսատանը լաբորատորիա չկա, և լաբորատորական հետազոտություն չի կատարվում»—(Բիմիակ. սինդիկատի 1929 թ. ապրիլի

Զ-ի գլությունը): Ապրանքն առանց դննության ընկած եւ մաքսատանը, չի ոգտագործված միայն այն պատճառով, վոր չի կարելի զննություն կատարել վորպեսզի վորոշվի, թե մաքսալին առարիֆի վոր հոգվածի համաձայն պետք եւ մաքս վերցնել: Յեկ այն ժամանակ, յերբ այդ ընկերների կարծիքով չի կարելի արդ հին սխտեմից հրաժարվել, առաջավոր պետությունները, ինչպես, որինակ, չըուսիսալին Ամերիկայի Միացյալ Նահանգները, վաղուց մաքսը հաշվում են ստացվող ապրանքի արժեքի վորոշ տոկոսի չափով, թեև իսկական գները ճշտորեն վորոշելու համար նրանք ստիպված են Յեկրոպայում հատուկ գործակալություն պահելու: Հասկանալի յե, վոր այս գեպքում այլևս պետք չեն վոչ լարուատորիաներ և վոչ ել այն անմիտու անհեթեթ հաշիվները, վորոնք մեզ տասնյակ միլիոններ են նստում:

Մաքսալին տարիքների որինակն ելական նշանակություն ունի. այդ որինակը ցուց եւ տալիս, թե ինչպես մենք, ինքներս չնկատելով, հաճախ գտնվում ենք հին սխտեմի աղղեցության ներքո, և թե ինչպես հին չինովսիկները, պայքարելով իրենց գոյության համար, մոլորեցնում ու կաշվանդում են:

Յես կերցնեմ մի ուրիշ որինակ, վոր վերաբերում եւ Ֆինժողկոմատին: Այս որինակը յես բերում եմ հենց այնպիս, արդարացի լինելու համար, վորպեսզի չասեն, թե յես մի քանի ժողկոմատներ հիշատակեցի, իսկ մուսներին վիրավորեցի:

Համարյա յերկու տարի Ֆինժողկոմատի գեմ պայքար եւ մղվում այն մասին, թե արդյոք պետք եւ լուրաքանչչուր ձեռնարկության մեջ բաժային պաշտոնյա

պահել, քանի վոր մեր յերկրում արդյունարերությունը ձնշող մեծամասնությամբ պետական եւ կապիտալիստական հասարակակարգում, վորը հիմնված եւ մասնավոր սեփականության վրա, վորտեղ հազարավոր զանազան գործարաններ կան, վորտեղ արտազրվող ապրանքի քանակը վորոշել կարելի յե միայն ամեն մի ձեռնարկության վրա. հսկողություն ունենալու դեպքում,— այդ յերկրներում բաժանված պաշտոնյաների գոյություն ունեցող սխտեմը հասկանալի յե:

Մեր խորհրդալին բաժանները մինչեւ վերջին ժամանակներն ամբողջովին նախանեղափոխական սխտեմի ընդորինակություն ելին. իսկ այդ հին, մեր պետական արդյունարերության պայմաններում արդեն անպետք գարձած սխտեմի ընդորինակությունը մեզ շատ թանգ եր նստում, վորովհետև մենք ստիպված ելինք ձեռնարկություններում պահելու 3—3500 պաշտոնյա, վճարելով նրանց մոտ 5 միլիոն ռուբլի ոսմիկ հենց վոր մենք հրաժարվեցինք այդ սխտեմից, մենք հնարավորություն ունեցանք բաժեկի գանձման ծախքերը կրծատելու մի բանի անգամ: Սակայն այդ բավական չե:

Բաժը (ակցիզ) մենք զանձում ենք քաշի համեմատ, մի փութ շաքարից—4 ռ., մի փութ նավթից—60 կ. և այլն. մենք արդյունահարկը հաշվում ենք շըրջանառության վորոշ տոկոսի ձեռվ, այսինքն՝ ապրանքի զնի համեմատ. որինակ, շաքարից—3,8⁰/₀-ը, նավթից—1,8⁰/₀-ը, լուցկուց—4,8⁰/₀-ը: Կարծես բնական կիներ, յեթե հարց գրվեր, թե ինչնումի դեպքում փթերով ենք հաշվում, իսկ մի այլ գեպքում՝ արժեքի համեմատ, արդյոք չե՞ր կարելի այստեղ ևս կիրառել այն ձեւ,

վար մենք առաջարկում ենք մաքսի համար. այդ դեպքում հնարավոր կլիներ ապարատը կրծատել ավելորդ և իզուր կատարվող ծախքերից, և այդպիսով արտադրողական ծախքերի համար միջոցներ տնտեսել; Վորապես զի պարզ լինի, թե վորքան գժվար և այս հարցը լուծել, իս մի փոքրիկ որինակ կը երևի, վոր վերաբերում և պապիրոսների վրա փակցվող բանդերոլին: Կապիտալիստական էրլուներում բանդերոլը գոյություն ունի այն պատճառով, վոր առանց տուփի վրա բանդերոլ փակցնելու ուրիշ հնարավորություն չկա հետեւելու, թե ով և բաժ վճարում և ով չի վճարում:

Իսկ մեզանում կան ընդամենը մի քանի ծխախոտագործական տրեստներ, նրանց թիվը մեծ չե, և դժվար չե փորոշել, թե նրանցից յուրաքանչյուրը վորքան ապրանք և արտադրում, ուստի մեր պայմաններում բաժը կարելի չե գանձել նաև առանց բանդերոլի: Կարծես հարցը շատ պարզ ե, և դժվար չե այդպիսի կարգ սահմանել, սակայն յեթե դուք տեսնեք այս հարցի քննության ու լուծման ընթացքը, ապա կհամոզվեք, թե վորքան դժվար և նրա լուծումը գործնականում: 1928 թ. փետրվարին ԲԳՏ առաջարկում և Ֆինժողկոմատին հրաժարվել պապիրոսներին բանդերոլ փակցնելու սիստեմից, սակայն Ֆինժողկոմատը չի համաձայնավում, և ապրիլի 12 ին այդ հարցը քննության և առնընդում ԲԳՏ կոլեգիայում: Ֆինժողկոմատը հարցը փոխադրում և նախապատրաստման հանձաժողով: Նախապատրաստման հանձնաժողովը հուլիսի 9 ին հաստատում և ԲԳՏ կոլեգիայի վորոշումը: Ֆինժողկոմատը բողոքում է, Ժողկոմինի նախագահի տեղակալը հունի 23-ին հաստատում և ԲԳՏ վորոշումը, վորը հետո

հաստատվում և Ժողկոմինի կողմից: Ֆինժողկոմատը դարձալ բողոքում և Ժողկոմինի վորոշումների զեմ և զիմում և ուղղակի ԽՍՀՄ Կենտգործկոմին: Կենտգործկոմը Ֆինժողկոմատի բողոքը թողնում և առանց հետեւանքի: Վորովհետեւ Կենտգործկոմում այս հարցը վճռվել եր ոգոսառուի 22-ին, այսինքն՝ համարյա մոտեցել եր նոր տնտեսական տարին, ուստի պապիրոսների մի մասն այս տարի դուրս չեկավ բանդերոլներով: Սակայն այստեղ զլխավորն այդ չե, զլխավորն այն ե, վոր այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես մեզնում մարդիկ կապված են ինի նետ, հիմնականն այն ե, վոր մենք ինքներս չենք նկատում, թե ինչպես մեր ապարատում մնացած հին, փտած կարգերը մեզ հարկադրում են ավելորդ, անտեղի ծախքեր անել մեր պայմաններում, ծախքեր, վորոնք մեր ծողովրդական տնտեսության մեջ բացարձակապես չեն կարող արդարանալ: Իմ բերած Յ որինակը բավական համոզիչ կերպով հաստատում և այդ:

ԱՊԱՐԱՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Թույլ տվեք այժմ համառոտ կերպով բնորոշել ապարատի վերակազմության այն հիմնական խնդիրները, վորոնք կանգնած են մեր առաջ:

Առաջին հարցը—կառավարման ապակենտրոնացումն ե. այս ասպարհում մենք վերջին տարիներում քիչ բան չենք արել, մի շարք անուղակի ապացուցներ այդ հաստատում են: Յեթե, որինակ, նայեք Միության ժողկոմինի պորտֆելը, ապա այլևս դուք այնտեղ չեք գտնի լուծման սպասող 800 գործ, ինչ-

պես այդ կարելի էր տեսնել մոտավորապես մի տարի առաջ, այնտեղ գուք այժմ հազիվ մեկ-էրկու ծանուցագիր գտնեք. այդ նշանակում ե, վոր ինչ-վոր ուրիշ անձինք այդ հարցերը լուծում են: Այստեղ իրավունքների ու պարտականությունների վորոշ փոխանցում, վորոշ բաղվում ե կատարվել, սակայն այդ բավական չե: Ինչիւ Վորովինետե, նախ, շրջանացման հատեանքով, վորն այժմ արդեն ավարտվում ե, մենք մի շարք լուրջ գործառնական հարցերի լուծումը պետք ե հանձնենք տեղերին. Երկրորդ՝ լավացել ե մեր աշխատանքի վորակը, մենք այժմ ունենք հնգամյա պլան, վորով վորշվում ե, թե ինչպես և ինչ նպատակներով պետք ե գործադրվեն մեր միջոցները և այն, Երրորդ՝ մեզանում արդեն հասունացել են տնտեսությունը դեկավոր անձանց նոր կադրեր:

Իմ գեկուցման առաջին մասում յես խոսեցի այսպես կոչված «շտեմպելող կոմունիստների» մասին, սակայն այդ ամենեին չի նշանակում, թե յես մեղադրում եմ մեր տնտեսավարների հեմական կադրերին. այն փաստը, վոր մենք վերելքի գծով ենք ընթանում, արդյունաբերության բարելավման գծով ենք առաջ ընթանում՝ չնայած վասարարությանն ու զանազան արգելքներին, այդ փաստը ցուց ե տալիս, վոր մեզ գտնում անպայման անել, հասունացել են տնտեսավարների հակայական կադրեր, բոլոր գծերով մեզ ոգնուրյան են հասնում յեվ արդեն հասել են նոր բարել ուժեր: Յեվ յեթե մեր արդյունաբերությունը մենք համեմատենք միքանի տարի առաջ գրաւթյուն ունեցող կացության հետ, ապա կտեսնենք, վոր զբությունը բավական զգալի չափով փոխվել ե դեսի լավի:

Այն փաստը ես, վոր վասարարական բոլոր գործերը մերկացվում են,—իսկ այդ բոլոր գործերն ել հին ծագում ունեն,—իր հերթին նույնպիս ցուց ե տալիս, վորոշ բարելավում կատարված եւ Յեվ այժմ, յերբ մենք հնգամյա պլան ունենք, յերբ մեր կադրերն անպայման հասունացել են, իսկ մլուս կողմից՝ շրջանացումը հնարավորություն ե տալիս աշխատանքն ավելի նպատակահարմար ձեռվ բաշխելու մի շարք ասպարեզներում, այժմ մենք այդ չափով հնարավորություն ունենք նորից քննության առնելու Միութենական Ժողկոմիսորհի և Ժողկոմատների, դաշնակից Ժողկոմատների ու հանրապետությունների, ԺՏԳԽ և տրեստների և այլ մարմինների փոխարարերությունների սիստեմի հարցը: Այս գեղքում վերաքննությունը վոչ թե պետք ե կատարվի մասր գործերի գծով, այլ գործառնական պարտականությունների ու ֆունկցիաների գծով, վորոնք կարող են կատարված փոփոխությունների հիման վրա ու վերջին տարիներում ձեռք բերած արդյունքների շնորհիվ հանձնվել ստորագաս մարմիններին:

Այս ամենամեծ խնդիրներից մեկն ե:

Յերկրորդ նույնպիսի խոշոր խնդիրը—ԺՏԳԽ և տեսաների դերի խնդիրն ե: Հարցն այն ե, վոր տրեստն եին կանոնադրության և նին ֆունկցիաների հետեւ վանքով չեր կարող ապրել՝ տոանց բյուրովրատական կազմակերպության վերածվելու. այդ անխուսափելի յեր: Յեվ, իրոք, վերցնենք տեքստի արդյունաբերությունը: Ի՞նչ և ստացվել այս ճյուղում. տրեստը յերեք հիմնական ֆունկցիաներ ուներ—արտադրանքը սպառել, նյութեր հայթալիթել և ֆինանսավորել: Վեր-

Հին կերեք տարվա ընթացքում սպառնան, վաճառման
փունդիան անցել է սինդիկատին. նկութերի հայ-
թալիումը մասամբ անցել է գործարանին, մասամբ
սինդիկատին. վերջինն այժմ հայթալիումը կազմա-
կերպում է պլանային կարգով, վորպեսզի պակասեց-
նի այն կորուստը, վոր ստացվում եր առանձին գոր-
ծարաններում ավելորդ պաշարներ կուտակելուց. Ֆի-
նանսավորումը կազմակերպվում է սինդիկատի և բան-
կերի միջոցով: Ել բնչ և անելու սինդիկատը. հասկա-
նալի է, վոր այս պայմաններում տրեստը հին ոել-
ուով այլևս տռաջ շարժվել չի կարող. յեթե նա
կանգ առնի հին դիրքերում, ապա միայն կարող և
արդյունաբերության գարգացումը կասեցնել: Այդ
դրությունից խուսափելու համար անհրաժեշտ ե, վոր
պեսզի տրեստը դառնա տեխնիկական ղեկավարու-
թյան մարմին, տեխնիկական ռացիոնալացման մար-
մին, ձեռնարկությունների միջև փորձի փոխանակու-
թյուն կազմակերպող մարմին, վորն ողնում է տրեստի
միջ մանող ձեռնարկություններին յուրացնելու ոռու-
սական և արտասահմանյան գիտության ու տեխնի-
կայի նվաճումները: Տրեստի նոր կազմակերպչական
դերի հարցն անշուշտ հասունացնել ե, ժամանակ և մեծ
չափերով փոփոխելու նրա այժմյան փունկցիաները:
Մի շարք տրեստներ արդեն ձեռնարկում են այդ աշ-
խատանքներին:

Դժբախտաբար, իմ տրամադրության տակ մնա-
ցած ժամանակի սղության պատճառով յես չեմ կարող
կարդալ տրեստների նախագահներից մեկի նամակը,
վորտեղ նա բացարձակ ճշտությամբ նշում է այն փո-
փոխությունները, վորոնք այժմ պետք է կատարվեն

տրեստների կանոնադրության և նրանց փունկցիա-
ների մեջ:

Այս հարցի հետ ե կապված նույ ԺՏԻ հարցը:
Մեզնից լուրաքանչյուրն սկսում է մտածել այն մա-
սին, վոր հնգամյա պլանը վորու տեսակետից թերի պլան
և ՈԵՊՀւ-ի պլանի հետ համեմատած, այսինքն՝ այդ պլա-
նը գլխավորապես տեսական, առավելապես տեսա-
կան պլան ե՝ բան տեսնիկական պլան. մենք գիտենք
այն ցացանիւները (ՊՈԿԱԶԱՏԵԼԻ), վորու մենք պետք է
հասնենք, սակայն մենք չունենք այն անհրաժեշտ աշխա-
տների տեսնիկական պլան, վորով պետք է հասնենք
այդ ցացանիւներին:

Յեկ այստեղ ԺՏԻ տռաջ գրվում է մի հարց,
վորն ամենամոտիկ ապագայում պետք է լուծել, այդ՝
ԺՏԻ-ը տնտեսական-ֆինանսական կենարունական
ղեկավարության տպարատից տեսնիկական ղեկավա-
րության շտարի վերածելու հարցն ե: Յեթե ԺՏԻ
մնա առավելապես տնտեսական-ֆինանսական ղեկա-
վարության այժմյան դիրքերում, ապա նա, ինչպես և
տրեստները, ինարկե, զգալի չափերով, կդառնա ա-
ռողջ նախաձեռնության, մրցակցության ծավալումը
կասեցնող, խանգարող մի մարմին:

Եերբորդ խնդիրը՝ մեր բոլոր հիմնարկների գի-
տական աշխատանքի վերը բարձրացնելն ե. զարձակ
հնգամյա պլանն ամենից լավ է հաստատում այս տե-
սակետը. պլանային աշխատավորները խնդրել են թե-
ղիսների մեջ մտցնել նաև այն սկզբունքը, վոր մեր
Պետպլանն ել ավելի կապված լինի մեր գիտական

¹ Թուսատ. Ելեքտրիֆիկացման Պետ. Հանձնաժողով—
ՏՕՅԱՐԾ:

հիմնարկների և արտասահմանվան գիտական՝ ցանցի հետ։ Հասկանալի յի, վոր այժմ, յերբ հաստատված և հնգամյա տնտեսական պլանը, առանց մեր բոլոր պլանալին մարմիններում գիտական աշխատանքի դերը բարձրացնելու, մենք անխուսափելիորեն կանգնած կմնանք միենուզն տեղում, մենք առաջ շարժվել չենք կարող։

Մոտակա տարբիներում մենք պետք ե մեծ թվով գիտական ուժերի, ճարտարագետների, տեխնիկների և տնտեսագետների տեղափոխություն կատարենք։ Գրասենյակից, վորը նրանց հաճախ դարձնում ե վորեւ ոգուտ չտվող մարդիկ, պետք ե նրանց շարժել դեպի գործարանները, ռացիոնալիզատորական գրասենյակները, բյուրոնները, ինստիտուտները, դեպի պլանալին մարմինները։ Պետք ե մասսայական չափերով տեխնիկական գրականություն հրատարակել, պետք ե լուս ընծագել հարյուր հազարավոր նեղ-մասնագիտական գրքեր, վորոնք հեռավոր Ուրալում կամ Ուզբեկստանում աշխատող ճարտարագետին հնարավորություն տան հետևելու համաշխարհակին և խորհրդակին գիտության նորագույն նվաճումներին, հնարավորություն տան ծանոթանալու այդ նվաճումներին։ Պետք ե մեր տնտեսական և պլանալին հիմնարկները մեր գիտական հիմնարկների հետ կազմակերպչորեն շաղկապող սիստեմ ստեղծել, պետք ե վորոշել այդ սիստեմի ձեր. պարզ ե, իհարկե, վոր կանքը շաղկապի ամենաբազմազան ձեր կառաջադրի։

Ակադեմիկ Բախիը, վորի մասին դուք բոլորդ շատ եք լսել, մեր հարցին ի պատասխան մի նամակ ե գրել, վորի մեջ նկարագրում ե, թե ինչպես այժմ

նրանց մոտ քիմիալի ասղարիզում գիտական-հետազոտական աշխատանքի պլանը, գիտական մարմինների նախաձեռնությունը շաղկապվում ե գործնականի հետ, որինակ, արհեստական մազաթելի (ՅՈԼՈԿԻ) գործարանի կառուցման հետ։ Այդ միանգամայն յուրահատուկ կապը, այդ զուգորդումը հնարավորություն ե տալիս անհապաղ կյանքում կիրառելու այն, ինչ վոր նշված ե պլանով, ինչ վոր ծրագրված ե։ Ուստի մենք ընդգծում ենք, վոր անհրաժեշտ ե մեր բոլոր հիմնարկների աշխատանքի գիտական հիմքերը բարձրացնել։

Չորրորդ խնդիրը—գործածության ծախքերի վճռական կրճատումն ե։ Առևտրի ժողկոմատում աշխատող միքանի ընկերներ սիրում են պարծենալ, թե մենք իբր թե այս ասպարիզում ավելի մեծ հետեւանքների լինք հասել քան արտասահմանում։ Իհարկե, այդ կարծիքը սխալ ե։ Այդ մասին մանրամասն և սպառիչ տվյալներով խոսել ե ընկ. Սերգոն արհմիությունների համագումարում։

Հայթալթման վճռական բարելավման, գործածության ծախքերի վճռական կրճատման հարցը պետք ե մեղանում ինչպես ել լինի՝ լուծվի։ Յեվ այդ հարցը կարող ե լուծվել, վորովհետև մենք այն առավելությունն ունենք, վոր մենք պլանալին պետություն ենք, իսկ այդ մեզ հնարավորություն ե տալիս անհամենա ավելի քիչ ծախսել ապրանքների գործածուրյան վրա, քան կապիտալիստներն են ծախսում, յեվ ավելի շատ միջոցներ հատկացնել արտադրությանը։ Սրա հետ կապված և նաև սպառողին ավելի լավ սպասարկելու, շուկայի հետ ավելի մեծ կապ ստեղծելու հարցը և այլն։

Որինակ, զյուղացուն հարկավոր են դիմացկուն
կոշիկներ, մեր զյուղերում շերովի կոշիկներով մաս
գալ չի կարելի. սակայն մեր արդյունաբերությունն
այդպիսի դիմացկուն կոշիկներ չի արտադրում, մեր
շուկան հայթալիթում և միայն շերովի կոշիկներ:

Դժբախտությունն այն է, վոր մեր շուկան հաշ-
վառում չունի, նա չի պարզում, թե վ՞ր կոշիկներից
ինչ քանակությամբ պետք ե արտադրել ուստի և
վորոշ չափով չի կարողանում պահանջվ բավարարել
և սրում և ապրանքների ճգնաժամը: Դժբախտու-
թյունն այն է, վոր մեր տուտրական կազմակերպու-
թյունները թույլ հոտառություն ունեն, մեր կոռպե-
րատիվ սիստեմը վերակառուցման կարիք և զգում
(Զայներ. ձիշտ ե), նա չափազանց կենտրոնացված է,
վորից և շատ թերություններ են առաջանում: Պետք
է մեր կոռպերացիան հնարավորություն ունենա
պելի շատ գործելու, գործնական աշխատանք
կատարելու, վորպեսզի չստեղծվի այժմյան դրությու-
նը, յերբ մեզանում կոշիկներ կարելու համար կաշի և
նրան (պաղոշ) կա, իսկ այդ նույն կոշիկները կար-
կատելու համար կաշի և նրան չկա, ուստի և կրունկ-
ներին տակ գցելու համար վերցնում են համարյա-
նոր կոշիկների արժեքի կեսը: Յեկ այնպիսի զրու-
թյուն և ստեղծվում, վոր յեթե մեկի կոշիկները պատա-
ռություն են, ապա նա ստիպված է այնքան հագնել,
վորքան միայն հնարավոր է, իսկ հետո դեռ գցել և
նորը գնել (յեթե, ինարկե, նյութական հնարավորու-
թյուն ունի): Արտաքուստ կարծիս թե ինսայողություն
և կատարվում, սակայն այդպիսի խնայողության
(կարկատանի կաշի չլինելու) հետեանքն այն է լինում,

վոր մի զույգ կոշիկ մաշելու փոխարեն յերկու զույգ
են մաշում: Այսպիսով արհեստականորեն ավելանում
ե պահանջը:

Պետք է հնարավորություն տալ մեր կոռպերա-
ցիային շուկայում ինքնուրույնաբար գործելու, իր
նախաձեռնությունը հանդես բերելու, պետք ե ավելի
մեծ կապ ստեղծել շուկայի հետ, վորպեսզի, յեթե, ո-
րինակ, զյուղացուն յերաժշտական գործիքներ են հար-
կավոր, վորի փոխարեն կարելի յե վորոշ քանակու-
թյամբ հաց ստանալ, ապա մեր կոռպերացիայի մար-
մինները կարողանան զյուղացու պահանջվ բավարա-
րել և նրան անհրաժեշտ ապրանքը հայթալիթել:

Այլ խռոքով՝ այստեղ դրված է արդյունաբերու-
թյունն ավելի մեծ չափով ըսկային մոտեցնելու հարցը,
դրված ե մեր կոռպերատիվ մարմինների գործառնական
աշխատանբները վորոշ չափով ապակենունացնելու հարցը,
այնտեղ, վորտեղ ավելորդ կենտրոնացում կա, պետք
ե վորոշ չափով փոփոխել նաև Առևտրի ժողկոմատիք
մարմինների կողմից կիրառվող կարգավորման ձեվերը,
վորպեսզի կոռպերացիան պելի մեծ հնարավորու-
թյուն ունենա մեր զյուղական և քաղաքացին մասսայի
առևտրական կարիքներն ու պահանջները մեր արդյու-
նաբերությանը հաղորդելու:

Հինգերորդ խնդիրը վերաբերում է պետական ար-
դյունաբերության յևլ պետական առեվտրական ու կոռ-
պերատիվ մարմինների փոխարաբերությունների սիսե-
մին: Այստեղ կարեոր նշանակություն ունի բանկերի
դերը. ներկայումս ԲԳԾ նախաձեռնությամբ փորձ և
արվում, վորպեսզի բնակչությունը մի շարք կոմունալ
